Հավելված
ՀՀ կառավարության 2013 թ.
նոյեմբերի 14-ի նիստի N 47
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՄԱՍ ԿԱԶՄՈՂ ՀԻՄՆԱՐԱՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Հիմնարար փաստաթուղթը նախապատրաստվել է Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների մոնիթորինգային մարմիններին ներկայացնելու նպատակով՝ ի կատարումն ՀՀ կառավարության 2013թ. հունվարի 10-ի N 70-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2013թ. գերակա խնդիրների Հավելված 2-ի 72-րդ կետի: Հիմնարար փաստաթուղթը կազմելու է ՀՀ կողմից ՄԱԿ-ի մարդու իրավունքների մոնիթորինգային մարմիններին ներկայացվող բոլոր ազգային զեկույցների բաղկացուցիչ մասը:

Բովանդակություն

I. Ընդհանուր տեղեկատվություն զեկուցող երկրի մասին 4

A. Ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական և մշակութային բնորոշիչներ 4

Ընդհանուր տեղեկատվություն 4

Աշխարհագրական տվյալներ 4

Պատմական ակնարկ 4

Ժողովրդագրական ցուցանիշներ 9

Սոցիալական, տնտեսական և մշակութային ցուցանիշներ 13

B. Պետության սահմանադրական, քաղաքական և իրավական համակարգը 25

Հանցավորության և արդարադատության համակարգի վերաբերյալ տվյալներ 33

II. Մարդու իրավունքների պաշտպանության և տարածման հիմնական շրջանակները 39

C. Մարդու իրավունքներին առնչվող միջազգային նորմերի ընդունումը 40

Մարդու իրավունքներին առնչվող առանցքային միջազգային պայմանագրեր և արձանագրություններ 40

Մարդու իրավունքներին առնչվող ՄԱԿ այլ կոնվենցիաներ և փաստաթղթեր 41

Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող կոնվենցիաներ 42

Միավորված ազգերի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող կոնվենցիաներ 43

Միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Հաագայի կոնֆերանսի շրջանակներում ընդունված կոնվենցիաներ 43

Ժնևյան կոնվենցիաներ և միջազգային հումանիտար իրավունքին առնչվող այլ պայմանագրեր 43

Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող կոնվենցիաներ 44

Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող համաձայնագրեր 46

D. Ազգային մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության շրջանակները 46

E. Ազգային մակարդակում մարդու իրավունքների տարածման շրջանակները 50

F. Միջազգային մոնիթորինգային մարմիններին ազգային զեկույցներ ներկայացնելու գործընթացը 53

G. Մարդու իրավունքներին առնչվող այլ տեղեկատվություն..... 55

III. Խտրականության դեմ պայքարի և հավասար իրավունքների ապահովման վերաբերյալ տեղեկատվություն..... 57

I. Ընդհանուր տեղեկատվություն զեկուցող երկրի մասին

A. Ժողովրդագրական, տնտեսական, սոցիալական և մշակութային բնորոշիչներ

Ընդհանուր տեղեկատվություն

1. Հայաստանի Հանրապետությունը (կարճ՝ Հայաստան) ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է՝ կիսանախագահական կառավարման համակարգով: ՀՀ պետական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվաընտանիքին՝ հանդիսանալով առանձին, ինքնուրույն ճյուղ: Հայաստանի Հանրապետությունը վարչական տեսանկյունից բաժանվում է 10 մարզերի (915 համայնք): ՀՀ մայրաքաղաքը Երևանն է, որն ունի համայնքի կարգավիճակ: ՀՀ ազգային արժույթը դրամն է (միջազգային նշանակումը՝ AMD), որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. Նոյեմբերի 22-ից: ՀՀ ազգային տոնը՝ Անկախության օրը սեպտեմբերի 21-ին է:

Աշխարհագրական տվյալներ

2. Հայաստանի Հանրապետության տարածքը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածում, Կովկասի և Առաջավոր Ասիայի սահմանագծում: Հայաստանի Հանրապետության սահմանակից պետություններն են Վրաստանը՝ հյուսիսից, Ադրբեջանը՝ արևելքից, Իրանը՝ հարավից, Թուրքիան՝ արևմուտքից և հարավ-արևմուտքից:

3. Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում է 29.743 կմ^2: Հյուսիսից հարավ-արևելք տարածքի առավելագույն ձգվածությունը 360 կմ է, արևմուտքից արևելք՝ 200 կմ: Երկրի տարածքի 4,8% ջրային ավազանն է, որը կազմված է հիմնականում Սևանա լճից:

4. Հայաստանը լեռնային երկիր է: Այն ունի բարդ երկրաբանական կազմություն և բազմաձև ռելիեֆ: Երկրի տարածքի 76,5% գտնվում է ծովի մակարդակից 1000-2500 մ բարձրության վրա, ընդ որում, ամենացածր բարձրությունը ծովի մակարդակից՝ 375 մ, գտնվում է հյուսիս-արևելքում, իսկ ամենաբարձր կետը՝ Արագած լեռան գագաթը, ունի 4090 մ բարձրություն:

Պատմական ակնարկ

5. Հայերն Առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից են՝ ձևավորված Հայկական լեռնաշխարհի տարածքում, որն ընդգրկում է Անտիտավրոսի լեռների և Արցախյան (Ղարաբաղի բարձրավանդակ) լեռների արևելյան լանջերի միջև ընկած ընդարձակ տարածքը: Ըստ պատմիչների՝ Հայկական լեռնաշխարհի հնագույն հայկական միասնական պետությունը եղել է Հայկյանների Այրարատյան թագավորությունը: Մ.թ.ա. 9-րդ դարում Հայկական լեռնաշխարհի տարածքում ուժեղանում է մեկ այլ ցեղային միություն, որն աստիճանաբար իր ձեռքն է վերցնում քաղաքական գերիշխանությունը՝ ստեղծելով Ուրարտու պետությունը (Այրարատյան թագավորության անունով այսպես էին անվանում այս նոր պետությունը ասորեստանցիները, թեև բուն ուրարտական

արձանագրություններում պետությունը կոչվում էր Բիայնալե կամ Բիայնելե և Շուրելե, որը համապատասխանում է այժմ ընդունված անվանը՝ Վանի թագավորություն):

6. Ուրարտու պետության անկումից հետո (մ.թ.ա. 7-րդ դար) հայկական իշխանությունները միավորվում են մեկ միասնական թագավորության մեջ՝ Երվանդունիների արքայատոհմի օրոք: Մ.թ.ա. 4-րդ դարում Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության ավերակների վրա կազմավորված Սելևկյան պետությունը կարճ ժամանակով իր տիրապետությունն է տարածում նաև Հայաստանի վրա: Մ.թ.ա. 190 թ. Հայաստանը վերականգնում է անկախությունը: Արտաշեսյանների արքայատոհմի հիմնադիր Արտաշես I-ը մի շարք հաջող պատերազմների արդյունքում, ընդլայնում է Մեծ Հայքի թագավորության սահմանները՝ վերածելով այն ուժեղ պետության: Տիգրան II Մեծի օրոք (մ.թ.ա. 95-55 թթ.) Մեծ Հայքի թագավորությունը վերածվում է Առաջավոր Ասիայի հզորագույն տերության՝ հասնելով իր քաղաքական հզորության ամենաբարձր կետին: Հիմնականում ավարտելով հայկական հողերի միավորումը՝ Տիգրան II-ը միացնում է Ատրպատականը, Սելևկյան Ասորիքը, Կոմմագենեն, Կիլիկիան, Միջագետքը և այլ տարածքներ: Հայոց արքայի գերիշխանությունը ճանաչում են ոչ միայն Հրեաստանի, Նաբաթեայի, Վիրքի և Աղվանքի թագավորությունները, այլև Պարթևական պետությունը, նրան դաշնակից են դառնում Պարսից ծոցի արաբական ցեղերը և մի շարք կենտրոնասիական ցեղեր: Արտաշեսյանների օրոք Հայաստանում ուժեղանում է հելլենիստական մշակութային ազդեցությունը: Այնուամենայնիվ Հռոմի առաջընթացն Արևելքում վերջ է դնում Մեծ Հայքի հզորությանը: Մ.թ.ա. I դարի վերջում Արտաշեսյանների արքայատոհմը վերջնական անկում է ապրում:

7. Տրդատ I-ի (66-88 թթ.) գահակալությամբ սկիզբ է դրվում Արշակունիների կրտսեր ճյուղի իշխանությանը Մեծ Հայքում: III-IV դարերում Մեծ Հայքի թագավորությունը, հասարակական-տնտեսական փոփոխությունների արդյունքում, աստիճանաբար վերածվում է ավատատիրական միապետության: 301 թվականին՝ Տրդատ III-ի օրոք (286-330 թթ.), Հայաստանը դառնում է քրիստոնեությունը պետական կրոն հռչակած առաջին երկիրը: Հռոմի ու Սասանյան Պարսկաստանի նկրտումների դեմ ծանր պայքարը թուլացնում են Հայկական թագավորությունը, որի տարածքը 387 թ. բաժանվում է վերը նշված տերությունների միջև: Իսկ 428 թ. Հայոց թագավորությունը կորցնում է անկախությունը՝ վերածվելով պարսկական մարզպանության: Հիանալի գիտակցելով ստեղծված իրադրության ողջ վտանգը պետության և ժողովրդի համար՝ 405 թ. Մեսրոպ Մաշտոցը Վռամշապուհ արքայի և հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի հովանավորությամբ, ստեղծում է Հայոց ներկայիս այբուբենը, որը դառնում է աննախադեպ հզոր զենք ազգային ինքնության պահպանման գործում: Հայոց գրերի գյուտը նոր դարաշրջան է բացում հայ մշակույթի, գիտության և գրականության պատմության մեջ:

8. VII դարի կեսերից Հայաստան են ներխուժում արաբական զորքերը: Արդեն VIII-րդ դարի սկզբին Հայաստանն ամբողջությամբ գտնվում էր արաբական տիրապետության տակ: Արաբական տիրապետության դեմ ազգային-ազատագրական պատերազմներն ավարտվեցին 885 թվականին՝ հայկական թագավորության վերականգնմամբ՝ Աշոտ I Բագրատունու գլխավորությամբ: XI դարի կեսերից Բագրատունիների թագավորությունը անկում է ապրում: 1071 թվականի Մանազկերտի վճռական ճակատամարտում սելջուկ-

թուրքերից բյուզանդացիների կրած պարտությունից հետո Հայաստանը նվաճում են սելջուկ-թուրքերը: Բյուզանդական կայսրության վարած տեղահանման քաղաքականության և սելջուկ-թուրքերի արշավանքների հետևանքով բազմաթիվ հայեր ստիպված են լինում հեռանալ հայրենիքից: Նրանց մի մասը հաստատվում է Կիլիկայում, որի բնակչությունը XI դարի վերջերին արդեն մեծամասամբ հայկական էր: Կիլիկիայի հյուսիսարևելյան հատվածում՝ Լեռնային Կիլիկիայում, 1080 թ. առաջանում է Ռուբինյանների իշխանությունը, որը հետագայում իր մեջ է միավորում ողջ Կիլիկիան և մի շարք հարևան շրջաններ: 1198 թ. հայոց իշխան Լևոն II Ռուբինյանը արքայական թագ է ստանում գերմանական կայսրից: Կիլիկյան հայկական թագավորությունը սերտ առևտրական կապեր է հաստատում Վենետիկի և Ջենովայի հանրապետությունների, Ֆրանսիայի, Իսպանիայի, Գերմանիայի և այլ երկրների հետ: Սակայն Իկոնիայի սուլթանության և Եգիպտոսի մամլյուքյան պետության անողոք հարվածների ներքո, քրիստոնեական Եվրոպայից օգնության բացակայության պայմաններում 1375 թ. Կիլիկյան հայկական պետությունը անկում է ապրում: Կիլիկյան Հայաստանի անկումից հետո Հայաստանը դարեր շարունակ մնում է տարբեր տերությունների տիրապետության ներքո:

9. Թուրքմենչայի պայմանագրով (1828 թ.) և Ադրիանապոլսի հաշտագրով (1829 թ.), հիմնականում ավարտվում է ողջ Անդրկովկասի, այդ թվում՝ Արևելյան Հայաստանի, միացման գործընթացը Ռուսական կայսրությանը: 1828 թ. նախկին Երևանի և Նախիջևանի խանությունների տարածքների վրա ժամանակավոր ձևավորվում է Հայկական մարզը, որը դառնում է հետագայում վերականգնված հայկական պետականության հիմքը: Ռուսական կայսրությանը միանալու արդյունքում, արագանում է ազգային ինքնագիտակցության վերականգնումը և կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Հայաստանում:

10. 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո Հայկական հարցը՝ Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի ֆիզիկական անվտանգության խնդիրը, դառնում է միջազգային օրակարգի կետերից մեկը: Այս հանգամանքը և հայ ազատագրական շարժման ակտիվացումը հանգեցնում են 1895-1896 թթ. Օսմանյան կառավարության կողմից կազմակերպված հայերի զանգվածային կոտորածների Արևմտյան Հայաստանում, որոնց զոհ են դառնում ավելի քան 300 հազար հայեր:

11. Օգտվելով Առաջին համաշխարհային պատերազմի արդյունքում ստեղծված իրավիճակից՝ երիտթուրքական կառավարությունը ծրագրում և իրականացնում է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող հայերի ցեղասպանություն: 1915-1923 թթ. ժամանակահատվածում Օսմանյան կայսրությունում ապրող շուրջ երկու միլիոնից ավել հայերից մոտ մեկուկես միլիոնը սպանվում են, իսկ մնացածը՝ կա'մ բռնի մահմեդականացվում, կա'մ էլ ապաստան գտնում աշխարհի տարբեր երկրներում: Արևմտյան Հայաստանը զրկվում է իր բնիկ հայ բնակչությունից:

12. Օգտվելով Ռուսական կայսրությունում տեղի ունեցող հեղափոխական գործընթացներից՝ 1918 թ. մայիսին Հայաստանն իրեն անկախ է հռչակում: Նորաստեղծ հանրապետությունը գոյատևում է ընդամենը երկու տարի. 1920 թ. դեկտեմբերին

ռուսական Կարմիր բանակը մտնում է Հայաստան և հաստատում խորհրդային իշխանություն: Հետագայում Խորհրդային Հայաստանը մտնում է ԽՍՀՄ կազմի մեջ:

13. 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով և նույն թվականի Կարսի պայմանագրով (Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև) Նախիջևանը դառնում է ինքնավար տարածք (հանրապետություն)՝ Ադրբեջանի խնամակալության ներքո: Իսկ 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կովկասյան Բյուրոն, առանց պահպանելու ընթացակարգային կանոնները և չունենալով համապատասխան իրավական լիազորություններ, որոշում է կայացնում, որով Լեռնային Ղարաբաղը հայտարարվում է Ադրբեջանի կազմում որպես ինքնավար մարզ: Երկու որոշումների դեպքում էլ անտեսվում էր նշված տարածքների Հայաստանի հետ պատմական, էթնիկ, և մշակութային անքակտելի կապը: Հարկ է ընդգծել, որ Ադրբեջանի ներկայացրած տարածքային պահանջները զուրկ են եղել իրավական հիմնավորումներից: Այս հանգամանքի ամենավառ վկայությունն Ազգերի լիգայի կայացրած որոշումն էր, որով մերժվում էր ընդունել Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության դիմումը՝ Ազգերի լիգային անդամակցելու համար: Մերժման համար հիմք էր ծառայել այն, որ Ադրբեջանը մինչ այդ երբևէ չէր հանդիսացել անկախ պետություն, նրա սահմանները և ինքնիշխանությունը de jure չէին ճանաչվել Ազգերի լիգայի անդամ որևէ պետության կողմից, բացի այդ Ադրբեջանը de facto վերահսկողություն չէր իրականացնում իր կողմից պահանջվող տարածքների նկատմամբ:

14. Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը, ապօրինաբար տեղափոխվելով Ադրբեջանական ԽՍՀ վարչական ենթակայության տակ, պարբերաբար ենթարկվել են հայաթափման և հայկական մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականության: Այս առումով հատկապես տուժել է Նախիջևանը, որն ամբողջապես հայաթափվել է:

15. Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանը դառնում է առաջադեմ արդյունաբերական-ագրարային երկիր, համատարած գրագիտության, զարգացած գիտության ու կրթության, մշակույթի, գրականության ու արվեստի պետություն: Երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ Խորհրդային բանակի կազմում կար շուրջ 440 հազար հայ զինվոր և սպա: Հայկական ազգային 89-րդ դիվիզիան մասնակցում է Բեռլինի համար մղվող մարտերին: Երկրորդ աշխարհամարտի ավարտին հաջորդող տարիներին մեծ թվով սփյուռքահայեր վերադառնում են Հայրենիք՝ Խորհրդային Հայաստան: 1960-80-ականներին խորհրդային հանրապետության մտավորականների ու հասարակայնության, ինչպես նաև ղեկավարության կողմից բազմիցս բարձրացվում են Հայոց ցեղասպանության, Սփյուռքի, Ղարաբաղը խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու, Նախիջևանի և այլ ազգային հարցեր: Երևանում տեղի են ունենում խորհրդային իրականության մեջ առաջին բազմահազարանոց ցույցեր:

16. 1980-ական թթ. վերջին Միխայիլ Գորբաչովի վարած վերակառուցման քաղաքականությունը նպաստավոր պայմաններ ստեղծեց Լեռնային Ղարաբաղի հարցի բարձրացման համար: 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի /ԼՂԻՄ/ մարզխորհրդի 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանը, ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան, որոշում ընդունեց դիմել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և ԽՍՀՄ Գերագույն խորհուրդներին՝ մարզն Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանի կազմի մեջ ընդգրկելու մասին միջնորդությամբ:

Սկսված գործընթացին ի պատասխան՝ իրականացվեցին հայ բնակչության վայրագ կոտորածներ Սումգայիթում (1988 թ. փետրվար), Բաքվում (1990 թ. հունվար) և Ադրբեջանական ԽՍՀ այլ հայաշատ բնակավայրերում: Նման քաղաքականության արդյունքում հարյուր հազարավոր հայեր ստիպված էին հեռանալ իրենց բնակավայրերից՝ վերածվելով փախստականների:

17. Ելնելով Հայաստանի անկախության մասին հռչակագրի (1990 թ. օգոստոսի 23) դրույթներից՝ Գերագույն խորհուրդը 1991 թ. սեպտեմբերի 21-ին որոշեց հանրապետության տարածքում անցկացնել հանրաքվե՝ ԽՍՀՄ կազմից դուրս գալու և անկախանալու հարցով: Հանրաքվեի արդյունքների հիման վրա՝ 1991 թ. սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետություն: 1995 թ. ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որը փոփոխությունների ենթարկվեց 2005 թ.:

18. Առաջնորդվելով միջազգային իրավունքի նորմերով և այն ժամանակ դեռ գոյություն ունեցող ԽՍՀՄ օրենքներով՝ Լեռնային Ղարաբաղի բնակչությունը 1991 թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի միջոցով ամրագրեց անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը: Սակայն Լեռնային Ղարաբաղում և հարակից հայաբնակ տարածքներում ադրբեջանական իշխանությունների վարած էթնիկ զտումների քաղաքականությունը վերաճեց Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից բացահայտ ագրեսիայի և լայնածավալ ռազմական գործողությունների: Պատերազմի արդյունքում Ադրբեջանն օկուպացրեց Լեռնային Ղարաբաղի տարածքի մի մասը, իսկ Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի վերահսկողության տակ անցան հարակից շրջաններ, որոնք անվտանգության բուֆերի դեր կատարեցին՝ արգելափակելով ադրբեջանական կողմից ԼՂ բնակավայրերի հետագա հրետակոծումը:

19. 1994 թ. մայիսին Ադրբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը կնքեցին զինադադար, որը մինչ օրս ուժի մեջ է: Հայաստանի Հանրապետությունը ներկայումս առանձնակի կարևորություն է տալիս Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնորոշման իրավունքի իրացման ճանաչման խնդիրներին: Հիմնախնդրի կարգավորման շուրջ բանակցային գործընթացն ընթանում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների (Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա) միջնորդությամբ: Ներկայումս բանակցություններն ընթանում են 2007 թ. նոյեմբերին համանախագահների կողմից ներկայացված մադրիդյան առաջարկությունների հիմքի վրա: Մինսկի խմբի համանախագահ պետությունների ղեկավարները պարբերաբար հանդես են գալիս հայտարարություններով՝ ընդգծելով, որ հակամարտության բոլոր կողմերը պետք է առաջնորդվեն միջազգային իրավունքի երեք սկզբունքներով, որոնք են՝ ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառումը, տարածքային ամբողջականությունը, ժողովուրդների իրավահավասարության ու ինքնորոշման իրավունքը:

20. Պայմանավորված Հայոց ցեղասպանության վերաբերյալ պատմական հիշողության առկայության հետ՝ Հայաստանի Հանրապետությունը հետևողական պայքար է մղում ցեղասպանություն հանցագործության կանխարգելման և նման հանցագործությունների

հետևանքների վերացման ուղղությամբ: ՀՀ արտաքին քաղաքականության առաջնահերթություններից մեկն է հանդիսանում Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը և դատապարտումը: Հայաստանը դա դիտարկում է ոչ միայն պատմական արդարության վերականգնման և միջազգային իրավունքի սկզբունքների գերակայության տեսանկյունից, այլև տարածաշրջանում փոխադարձ վստահության մթնոլորտի բարելավման ու ապագայում նման ոճիրների կանխարգելման համատեքստում: Հայոց ցեղասպանության փաստը միջազգային ճանաչում է գտել բազմաթիվ պետությունների և միջազգային կազմակերպությունների օրենքներով, որոշումներով, բանաձևերով, ինչպես նաև տարբեր նահանգների ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների որոշումներով: 1915-23 թթ. Օսմանյան կայսրությունում հայ բնակչության զանգվածային կոտորածները որպես նախապես ծրագրավորված ու հետևողականորեն իրագործած ցեղասպանական ակտ որակող փաստաթղթերի ամբողջական շարքը հսկայական է (ամբողջական ցուցակը տե՛ս այստեղ http://www.genocide-museum.am):

21. Հայաստանը ՄԱԿ-ի շրջանակներում մշտապես հանդես է եկել ցեղասպանության կանխարգելման վերաբերյալ նախաձեռնություններով: Այդ նախաձեռնությունների արդյունքում Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից 1998 թ. ընդունվել են «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին կոնվենցիայի 50-ամյակին նվիրված», 1999 և 2001 թթ.՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժման մասին» բանաձևերը: 2008 թվականին Մարդու իրավունքների խորհրդի կողմից ընդունվել է «Ցեղասպանության կանխարգելման մասին» բանաձևը: 2013 թ. մարտի 22-ին Մարդու իրավունքների խորհրդի 22-րդ նստաշրջանում կոնսենսուսով ընդունվել է Հայաստանի նախաձեռնությամբ առաջադրված «Ցեղասպանության կանխարգելման մասին» նոր բանաձևը, որը նոր որակ է հաղորդում միջազգային հանրության կողմից ցեղասպանության կանխարգելման ուղղությամբ տարվող քաղաքականությանը:

22. Հայաստանի զարգացման համար հիմնական խոչընդոտ է հանդիսանում 1993 թվականից ի վեր Ադրբեջանի և Թուրքիայի կողմից իրականացվող շրջափակումը, ինչը միջազգային նորմերի խախտում է հանդիսանում: Շրջափակման հետևանքով Հայաստանի տնտեսությունը ամեն տարի կրում է զգալի վնասներ:

Ժողովրդագրական ցուցանիշներ

23. ՀՀ բնակչության թվաքանակը՝ ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների արդյունքների

	Առկա բնակչություն		*Մշտական բնակչություն*	
	2001	*2011*	*2001*	*2011*
Ընդամենը	**3 002 594**	**2 871 771**	**3 213 011**	**3 018 854**
ք. Երևան	1 091 235	1 054 698	1 103 488	1 060 138
Արագածոտն	126 278	125 539	138 301	132 925

Արարատ	252 665	246 880	272 016	260 367
Արմավիր	255 861	256 639	276 233	265 770
Գեղարքունիք	215 371	211 828	237 650	235 075
Լոռի	253 351	217 103	286 408	235 537
Կոտայք	241 337	245 324	272 469	254 397
Շիրակ	257 242	233 308	283 389	251 941
Սյունիք	134 061	119 873	152 684	141 771
Վայոց ձոր	53 230	47 659	55 997	52 324
Տավուշ	121 963	112 920	134 376	128 609

24. ՀՀ-ում առկա և մշտական բնակչության թվաքանակի քաղաքային և գյուղական բաշխումը (ըստ ՀՀ 2001թ. և 2011թ.. մարդահամարների տվյալների)

	Առկա բնակչություն			*Մշտական բնակչություն*		
	Ընդամենը	*քաղաքային*	*գյուղական*	*Ընդամենը*	*քաղաքային*	*գյուղական*
ՀՀ-2011թ., մարդ	2 871 771	1 847 124	1 024 647	3 018 854	1 911 287	1 107 567
%-ով ընդամենի նկատմամբ	100	64,3	35,7	100	63,3	36,7
ՀՀ-2001թ., մարդ	3002594	1945514	1057080	3213011	2066153	1146858
%-ով ընդամենի նկատմամբ	100	64,8	35,2	100	63,3	36,7

25. ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 3,026,900 մարդ:
26. ՀՀ մշտական բնակչության աճի միջին տարեկան ցուցանիշը 2001-2011 թվականներին կազմել է - 0,6%:
27. ՀՀ բնակչության խտությունը կազմում է 102 մարդ՝ մեկ քառ. կմ վրա:
28. ՀՀ մշտական բնակչության բաշխումն ըստ ազգությունների և մայրենի լեզվի (2001թ. մարդահամարի տվյալներով)

Ազգությունը	*Ընդամենը*	*Մայրենի լեզուն*				
		Հայերեն	*Եզդիերեն*	*Ռուսերեն*	*Ուկրաիներեն*	*Այլ լեզու*
Հայեր	3 145 354	3 128 490	391	14 728	88	1657
Եզդիներ	40 620	5 278	31 310	230	0	3802
Ռուսներ	14 660	1 666	0	12 905	21	68

Ուկրաինացիներ	1 633	291	0	629	692	21
Այլ	10 744	3 427	98	1 071	17	6131
Ընդամենը	**3 213 011**	**3 139 152**	**31 799**	**29 563**	**818**	**11679**

29. ՀՀ մշտական բնակչության բաշխումը՝ ըստ կրոնական դավանանքի (համաձայն 2011թ. մարդահամարի տվյալների).

Դավանանքը	*Մարդկանց թիվը*
Ընդամենը՝ համարել են իրենց որևէ կրոնի, եկեղեցու կամ ուղղության հետևորդ	2 897 267
որից՝	
Հայ Առաքելական	2 797 187
Կաթոլիկ	13 996
Ուղղափառ	7 587
Նեստորական	1 733
Ավետարանական	29 280
Եհովայի վկա	8 695
Բողոքական	773
Մորմոն	241
Մոլոկան	2 874
Շար-Ֆադինական	23 374
Հեթանոսական	5 416
Մահմեդական	812
Այլ	5 299
Չեն համարել իրենց որևէ կրոնի, եկեղեցու կամ ուղղության հետևորդ	34 373
Հրաժարվել են պատասխանել	10 941
Չնշածներ	76 273

30. ՀՀ բնակչության տարիքային կազմը տոկոսներով՝ ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների տվյալների.

Տարիքը (տարի)	*2011թ. մարդահամար*	*2001թ. մարդահամար*
0-14	18.7 %	24.3 %
15-64	70.8 %	66.0 %

65 և բարձր	10.5 %	9.7 %
Ընդամենը	100 %	100 %

31. ՀՀ բնակչության սեռատարիքային կազմը տոկոսներով՝ 2013թ. հունվարի 1-ի դրությամբ.

Տարիքը	*Կանայք (%)*	*Տղամարդիկ (%)*
0-4	6.3	7.7
5-9	5.5	6.9
10-14	5.1	6.4
15-19	6.6	7.6
20-24	9.2	9.7
25-29	9.1	9.3
30-34	7.6	7.8
35-39	6.4	6.3
40-44	6.0	5.7
45-49	6.7	6.3
50-54	8.0	7.5
55-59	6.5	5.9
60-64	4.8	4.1
65-69	2.7	2.1
70-74	3.6	2.7
75-79	3.0	2.2
80+	2.9	1.8

32. ՀՀ-ում ծնելիության և մահացության վիճակագրությունը *(1000 բնակչի հաշվով).*

Տարիներ	*Ծնելիության ընդհանուր գործակիցը*	*Մահացության ընդհանուր գործակիցը*
2007	12.4	8.3
2008	12.7	8.5
2009	13.7	8.5
2010	13.8	8.6
2011	13.3	8.6

33. ՀՀ-ում կյանքի սպասվող տևողությունը *(տարիներով)*

Տարիներ	*Տղամարդու*	*Կնոջ*	*Ընդամենը տղամարդու և կնոջ*
2007	70.2	76.6	73.5
2008	70.4	76.9	73.8
2009	70.6	77.0	73.9
2010	70.6	77.2	74.1
2011	70.7	77.5	74.2

34. ՀՀ-ում պտղաբերության գործակիցը *(Ծնելիության գումարային գործակիցը, 1 կնոջ հաշվով)*

Տարիներ	*Ընդամենը ՀՀ-ում*
2007	1.417
2008	1.444
2009	1.551
2010	1.556
2011	1.499

35. ՀՀ-ում տնային տնտեսությունների վերաբերյալ վիճակագրական տվյալներ.

		2007	*2008*	*2009*	*2010*	*2011*
Տնային տնտեսության անդամների միջին թվաքանակը (մշտական բնակչության հաշվարկով), մարդ		4.1	4.1	4	4.1	3.9
Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների մասնաբաժինը, %		31.8	31	31.2	30.7	30.9
Տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսությունների մասնաբաժինը, %		68.2	69	68.8	69.3	69.1
Մեկ ծնողի հետ ապրող երեխաների տեսակարար կշիռը բոլոր տնային տնտեսությունների մեջ ըստ գլխավորի սեռի	*կին*	...	...	...	1.9	1.5
	տղամարդ	...	...	...	0.2	0.2

Սոցիալական, տնտեսական և մշակութային ցուցանիշներ

36. Տնային տնտեսությունների անվանական սպառողական ծախսերի կառուցվածքը ՀՀ-ում 2007-2011թթ.

Ծախսերի հոդվածները	*Տնային տնտեսության մեկ շնչի հաշվով միջին ամսական*									
	Դրամ					*%*				
	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2007*	*2008*	*2009*	*2010*	*2011*
Սպառողական ծախսեր	**26297**	**28878**	**27667**	**28646**	**32585**	**100**	**100**	**100**	**100**	**100**
այդ թվում										
սնունդ	14080	14984	14145	14844	17184	53.5	51.9	51.1	51.8	52.7
որից՝										
սնունդ տնից դուրս	496	449	389	452	434	1.9	1.6	1.4	1.6	1.3
ալկոհոլային	236	227	238	272	245	0.9	0.8	0.9	1.0	0.8

խմիչքի գնում										
ծխախոտի գնում	975	1019	1035	1009	1123	3.8	3.5	3.7	3.5	3.4
ոչ պարենային ապրանքներ	4113	4730	4294	4439	5022	15.6	16.4	15.5	15.5	15.4
ծառայություններ	6893	7918	7955	8082	9011	26.2	27.4	28.8	28.2	27.7
այդ թվում										
Առողջապահություն	1248	1035	888	1136	686	4.7	3.6	3.2	4.0	2.1
կրթություն	1156	1221	833	141	167	4.4	4.2	3.0	0.5	0.5
բնակ-կոմունալ	2059	2635	2950	3008	3567	7.8	9.1	10.7	10.5	10.9
տրանսպորտ	782	967	1101	906	1003	3.0	3.3	4.0	3.2	3.1
կապ	966	1404	1285	1424	1570	3.7	4.9	4.6	5.0	4.8
մշակույթ	4	3	4	4	12	0.0	0.0	0.0	0.0	0.0
իրավաբանական	12	16	15	121	92	0.0	0.1	0.1	0.4	0.3
այլ ծառայություններ	666	637	879	1342	1914	2.5	2.2	3.2	4.7	6.0

37. Աղքատության ցուցանիշների դինամիկան 2004 և 2008-2011թթ.-ին (տոկոսներով)

Տարիներ	*Աղքատ*	*այդ թվում*	*որից*	*Ոչ աղքատ*
		Շատ աղքատ	*Ծայրահեղ աղքատ*	
2004	53.5	32.6	4.4	46.5
2008	27.6	12.6	1.6	72.4
2009	34.1	20.1	3.6	65.9
2010	35.8	21.3	3.0	64.2
2011	35.0	19.9	3.7	65.0

38. Աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, 2008 - 2011թթ (տոկոսներով)

Սեռը և տարիքային խմբեր	*2008*		*2009*		*2010*		*2011*	
	Ծայրահեղ աղքատ	*Աղքատ*	*Ծայրահեղ աղքատ*	*Աղքատ*	*Ծայրահեղ աղքատ*	*Աղքատ*	*Ծայրահեղ աղքատ*	*Աղքատ*
Կանայք	1.7	27.3	3.7	34.2	3.1	35.9	3.7	34.5
Տղամարդիկ	1.6	27.8	3.6	34.0	2.9	35.6	3.7	35.5
0-5 տ.	1.9	32.0	4.9	39.6	3.4	42.7	4.4	45.3
6-9 տ.	1.8	30.3	4.6	40.5	4.0	44.1	4.7	42.2
10-14 տ.	1.5	29.7	3.9	36.2	3.2	37.6	4.5	39.1
15-17 տ.	2.3	32.4	4.8	37.5	4.5	41.4	4.7	40.1
18-19 տ.	0.7	26.1	3.8	32.5	3.7	35.3	5.3	33.7
20-24 տ.	1.3	26.0	3.7	33.1	3.2	34.9	3.4	33.6

25-29 տ.	2.1	27.0	3.4	34.0	3.0	36.5	3.7	37.1
30-34 տ.	1.1	25.7	4.4	35.6	2.8	38.0	4.1	38.8
35-39 տ.	1.9	27.6	3.2	34.4	2.7	34.6	4.5	36.2
40-44 տ.	1.9	29.3	2.8	31.2	2.8	36.7	3.8	34.8
45-49 տ.	1.9	25.7	3.3	32.4	2.7	31.1	3.0	30.3
50-54 տ.	1.2	22.2	2.8	31.6	2.8	31.9	3.2	29.5
55-59 տ.	0.7	21.7	4.3	30.8	2.5	33.3	3.4	32.5
60-64 տ.	1.3	24.8	2.8	27.6	2.1	28.2	1.6	27.5
65+ տ.	2.0	29.5	2.9	33.9	2.5	33.4	2.8	30.8
Ընդամենը	1.6	27.5	3.6	34.1	3.0	35.8	3.7	35.0

39. Մեկ շնչի հաշվով սպառված սննդամթերքի էներգետիկայի մեջ օրական 2100 կկալ-ից պակաս ստացող բնակչության մասնաբաժինը (տոկոսներով)

	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*
Հանրապետական միջինը	46.4	44.5	52.7	59.7	55.5

40. Սպառման և եկամուտների անհավասարությունը 2008- 2011թթ.

	Սպառում				*Եկամուտ*			
	2008	*2009*	*2010*	*2011*	*2008*	*2009*	*2010*	*2011*
Ջինիի գործակից	0.242	0.257	0.265	0.267	0.339	0.355	0.362	0.371

41. ՀՀ-ում մանկական մահացության գործակիցները (1,000 կենդանի ծնվածի հաշվով)

տարիները	*Մանկական մահացության գործակիցը*
2007	10.9
2008	10.8
2009	10.4
2010	11.4
2011	11.6

42. ՀՀ-ում մայրամահացության գործակիցները (100,000 կենդանի ծնվածի հաշվով)

Տարիները	*Մայրամահացության գործակիցը*
2007	15.0
2008	38.8
2009	27.0
2010	8.9
2011	13.8

43. ՀՀ-ում արձանագրված տարափոխիկ հիվանդությունները, 2008-2012թթ.

	Ընդամենը (մարդ)					նրանցից՝ 0-14 տարեկան (մարդ)				
	2008	2009	2010	2011	2012	2008	2009	2010	2011	2012
Որովայնային տիֆ	11	1	-	-	-	3	-	-	-	-
Պարատիֆ A, B, C	1	1	-	-	-	1	-	-	-	-
Սալմոնելոզային ինֆեկցիաներ	385	451	391	373	460	231	223	239	199	282
Սուր աղիքային ինֆեկցիաներ	5767	5666	7666	7893	8352	3852	3950	5771	5859	6421
Դիզենտերիայի մանրէակիր	22	13	18	8	8	8	4	13	1	5
Տուլարեմիա	-	1	5	6	1	-	-	1	1	-
Սիբիրյան խոց	2	-	-	-	11	-	-	-	-	-
Բրուցելյոզ առաջնակի հայտնաբերված	289	346	295	260	226	24	33	32	18	8
Դիֆտերիա	-	1	-	-	-	-	-	-	-	-
Կապույտ հազ	3	11	4	1	8	3	11	4	1	8
Հարակապույտ հազ	21	26	15	8	18	20	23	14	7	18
Մենինգոկոկային վարակ	17	16	14	6	8	13	12	10	6	8
Փայտացում	-	-	3	-	1	-	-	1	-	-
ՁԻԱՀ	83	82	95	87	133	-	2	2	1	-
ՄԻԱՎ	136	149	148	182	226	-	3	4	2	4
Սուր թորշոմած պարալիչ	18	9	13	20	29	18	9	13	20	29
Կարմրուկ	-	-	2	-	-	-	-	-	-	-
Վիրուսային հեպատիտ	1 043	826	548	295	227	459	337	173	57	31
Կատաղություն	2	1	-	-	-	1	1	-	-	-
Ինֆեկցիոն մոնոնուկլեոզ	140	192	263	364	411	84	129	165	259	319
Պարոտիտ համա-ճարակային	98	71	38	16	6	80	54	31	12	5
Ռիկկետսիոզներ	-	-	-	1	-	-	-	-	-	-
Մալարիա առաջնակի հայտնաբերված	1	-	1	-	4	-	-	-	-	1
Լեպտոսպիրոզ	3	3	5	-	-	-	-	-	-	-
Վերին շնչուղիների սուր ինֆեկցիաներ	94580	191541	108229	113404	113748	62842	126364	73886	81830	82360
Գրիպ	198	293	55	9	-	77	102	16	6	-
Շնչառական օրգանների տուբերկուլյոզ	1 135	1 260	1 071	934	897	50	24	28	11	3
Սիֆիլիս	5	5	2	3	-	-	-	-	-	-
Գոնոկոկային վարակ (հոնորեա)	20	23	16	24	26	-	-	-	2	-
Քոս	312	336	266	222	144	119	119	116	96	66
Ոջլոտություն	2487	1410	830	565	272	2447	1365	803	552	252
Լեշմանյոզ	4	14	9	6	4	4	11	8	5	4

44. ՀՀ-ում մահացությունը՝ ըստ մահվան հիմնական պատճառների.

	Մահացածների թիվը (100 000 բնակչի հաշվով)				
	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.

վարակային և մակաբուծային հիվանդություններից	7.6	8.6	8.6	9.3	7.7
նորագոյացություններից	161.8	170.2	166.9	169.4	170.5
Էնդոկրին համակարգի հիվանդություններից	42.7	42.3	44.3	44.3	42.9
արյան և արյունաստեղծ օրգանների հիվանդություններից	0.5	0.3	0.4	0.6	0.6
հոգեկան խանգարումներից	0.6	0.2	0.1	0.1	0.2
արյան շրջանառության համակարգի հիվանդություններից	418.5	423.0	417.0	419.4	407.4
շնչառական օրգանների հիվանդություններից	58.7	55.4	55.0	50.8	52.1
մարսողական օրգանների հիվանդություններից	43.3	47.0	50.0	49.8	54.0
բնածին արատներից	4.9	6.1	9.6	12.5	14.3
պերինատալ շրջանում առաջացած վիճակից	7.6	6.6	6.1	6.1	6.8
ախտանիշներից, հատկանիշներից և նորմայից շեղումներից	25.3	23.5	24.4	24.8	27.8
մահվան արտաքին պատճառներից	38.7	40.9	37.7	38.4	41.7
այլ պատճառներից	21.4	23.5	29.6	32.0	29.5
Մահացածների ընդհանուր թիվը	**831.6**	**847.6**	**849.7**	**857.5**	**855.5**

45. ՀՀ-ում հանրակրթական տարրական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունը (տոկոսներով).

	Ընդամենը	*Աղջիկներ*	*Տղաներ*
2007	93.2	93.5	92.9
2008	95.5	96.2	94.9
2009	96.1	96.3	95.9
2010	96.8	97.4	96.4
2011	99.0	99.6	98.4

46. ՀՀ-ում հանրակրթական դպրոցներում աշակերտների համախառն ընդգրկվածությունը (տոկոսներով).

	Ընդամենը	*Աղջիկներ*	*Տղաներ*
2007	89.2	90.4	88.2
2008	90.8	92.1	89.6
2009	90.2	91.7	88.9

2010	90.1	91.8	88.6
2011	86.3	88.5	84.4

47. ՀՀ-ում հանրակրթական դպրոցներից հեռացած/ուսումն անավարտ թողած աշակերտների թվաքանակն ուսումնական տարվա սկզբին.

	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*
ընդամենը	3 206	5 876	5 480	5 914	758
տղաներ	1913	3537	3368	3492	502
աղջիկներ	1 293	2 339	2 112	2 422	256

48. ՀՀ-ում սովորողների թվաքանակի հարաբերակցությունը մանկավարժների թվաքանակին պետական ուսումնական հաստատություններում (սովորողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով).

	2007	*2008*	*2009*	*2010*	*2011*
Նախադպրոցական հաստատություններ	9.8	10.1	10.0	10.6	12.3
Հանրակրթական ուսումնական հաստատություններ	10.4	9.9	9.6	9.1	9.4
Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություններ	7.1	7.3	7.2	6.8	5.3
Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ	8.4	8.6	8.4	8.0	7.7
Բարձրագույն ուսումնական հաստատություններ	8.8	9.3	9.3	8.8	7.5

49. ՀՀ-ում գրագիտության մակարդակը, ըստ 2001թ. մարդահամարի տվյալների, կազմել է 99.4%:

50. Գործազրկության մակարդակը ՀՀ-ում՝ ըստ սեռի և տարիքային խմբերի.

	2008	*2009*	*2010*	*2011*
Ընդամենը	***16.4***	***18.7***	***19.0***	***18.4***
15-24	36.5	40.9	38.9	39.2
25-34	17.9	22.1	21.4	21.0
35-44	12.9	15.8	15.4	14.4
45-54	12.0	14.1	15.3	13.3
55-64	13.1	11.1	13.5	15.9
65-75	4.1	5.4	5.7	6.2
Տղամարդ	*14.4*	*17.8*	*17.0*	*17.3*
15-24	32.0	36.0	31.9	34.9
25-34	15.7	19.5	18.9	18.8
35-44	10.8	14.6	13.7	14.4
45-54	7.9	13.5	13.5	10.7
55-64	12.3	11.9	12.4	15.6
65-75	5.8	7.6	7.5	8.6
Կին	*18.6*	*19.9*	*21.2*	*19.6*

15-24	43.2	47.1	48.0	44.9
25-34	21.1	26.1	25.1	23.8
35-44	14.8	16.9	17.1	14.5
45-54	15.9	14.7	17.1	15.6
55-64	14.1	10.3	14.5	16.2
65-75	2.5	3.2	3.7	3.6

51. ՀՀ-ում զբաղվածությունը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների և սեռի (1000 մարդ)

	2008	*2009*	*2010*	*2011*
Ընդամենը	**1183.1**	**1152.8**	**1185.2**	**1175.1**
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	445.3	454.8	457.4	457.4
Արդյունաբերություն	129.5	114.5	120.6	128.7
Շինարարություն	105.1	82.4	85.8	67.4
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	121.2	110.0	128.4	123.9
Տրանսպորտ և կապ	61.9	64.5	70.6	65.8
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	29.5	22.5	43.5	40.7
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	229.2	246.0	235.0	242.8
Այլ ծառայություններ	61.4	58.1	43.9	48.5
Տղամարդ	644.8	617.3	644.8	610.9
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	197.7	209.9	202.4	200.5
Արդյունաբերություն	93.3	87.1	89.9	93.4
Շինարարություն	102.4	80.7	84.6	66.0
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	68.0	58.9	76.5	67.5
Տրանսպորտ և կապ	51.1	54.0	57.1	52.4
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	19.0	11.5	22.0	23.9
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	78.3	83.2	89.4	83.5
Այլ ծառայություններ	35.0	32.0	22.9	23.8
Կին	538.3	535.5	540.4	564.2
Գյուղատնտեսություն, որսորդություն և անտառային տնտեսություն, ձկնորսություն, ձկնաբուծություն	247.5	244.9	255.0	256.9
Արդյունաբերություն	36.2	27.4	30.7	35.3

Շինարարություն	2.7	1.7	1.1	1.3
Առևտուր, ավտոմեքենաների նորոգում, հյուրանոցներ և ռեստորաններ	53.2	51.1	52.0	56.4
Տրանսպորտ և կապ	10.7	10.5	13.5	13.4
Ֆինանսական գործունեություն, անշարժ գույքի հետ կապված գործառնություններ, վարձակալում և սպառողներին ծառայությունների մատուցում	10.6	11.1	21.5	16.8
Պետական կառավարում, կրթություն, առողջապահություն, սոցիալական անհատական ծառայությունների մատուցում	150.9	162.9	145.6	159.2
Այլ ծառայություններ	26.4	26.0	21.0	24.7

52. ՀՀ-ում ոչ ֆորմալ զբաղվածությունը՝ ըստ սեռի և ոլորտի (1000 աշխատատեղ)

	2008	*2009*	*2010*	*2011*
Ընդամենը	629.4	621.7	623.8	610.4
Գյուղատնտեսական ոլորտ	464.8	480.9	494.5	482.7
Ոչ գյուղատնտեսական ոլորտ	164.6	140.8	129.4	127.7
Տղամարդ	328.0	326.4	315.4	306.8
Գյուղատնտեսական ոլորտ	207.9	223.8	219.5	213.2
Ոչ գյուղատնտեսական ոլորտ	120.1	102.7	95.9	93.6
Կին	301.4	295.3	308.4	303.6
Գյուղատնտեսական ոլորտ	256.9	257.2	274.9	269.5
Ոչ գյուղատնտեսական ոլորտ	44.5	38.1	33.5	34.1

53. ՀՀ-ում ոչ ֆորմալ զբաղվածությունը՝ ըստ սեռի և տարիքային խմբերի (1000 աշխատատեղ)

	2010	*2011*
Ընդամենը	***623.8***	***610.4***
15-24	63.4	55.1
25-34	101.4	96.2
35-44	132.0	116.0
45-54	174.5	177.5
55-64	89.2	97.7
65-75	63.2	67.9
Տղամարդ	***315.4***	***306.8***
15-24	41.2	36.5
25-34	59.2	56.5
35-44	60.2	49.9
45-54	83.3	82.6
55-64	42.0	48.5

65-75	29.4	32.8
Կին	***308.4***	***303.6***
15-24	22.2	18.6
25-34	42.2	39.6
35-44	71.8	66.1
45-54	91.2	91.9
55-64	47.2	49.2
65-75	33.8	35.1

54. ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները.

	2008	*2009*	*2010*	*2011*	*2012*
Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ-ի դոլար)	3606.1	2666.1	2844.0	3,363.2	3,290.3
Անվանական ՀՆԱ (մլն. դրամ)	3,568,227.6	3,141,651.0	3,460,202.7	3,777,945.6	3,997,630.8
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ-ի դոլար)	11,662.0	8,648.0	9,260.3	10,142.1	9,950.3
Իրական ՀՆԱ-ի աճը	6.9	(14.1)	2.2	4.7	7.2
Համախառն ազգային եկամուտ (մլն. դրամ)	3,712,396.9	3,201,951.8	3,586,735.3	3,986,001.7	4,250,157.1
Գնաճ (ժամանակաշրջանի վերջի դրությամբ)%	5.2	6.5	9.4	4.7	3.2

55. ՀՀ-ում Սպառողական գների ինդեքսը 2012թ.-ը 2011թ-ի նկատմամբ կազմել է 102.6%:

56. ՀՀ պետական պարտքը 2008-2012 թթ.

	մլրդ ՀՀ դրամ					*մլն ԱՄՆ դոլար*				
	2008	*2009*	*2010*	*2011*	*2012*	*2008*	*2009*	*2010*	*2011*	*2012*
ՀՀ պետական պարտք	584.6	1,275.5	1,382.9	1,595.0	1,764.5	1,906.0	3,375.3	3,805.1	4,134.7	4,372.1
այդ թվում արտաքին պետական պարտք	483.7	1,121.1	1,199.5	1,376.9	1,509.0	1,577.2	2,966.8	3,300.1	3,569.3	3,739.1
ներքին պետական պարտք	100.9	154.4	183.4	218.1	255.5	328.8	408.5	504.6	565.4	633.0

57. ՀՀ 2009-2012 թթ. պետական բյուջեից սոցիալական ծախսերի գծով կատարված հատկացումները (մլն. դրամ).

	2009			2010		
	Փաստացի պետական բյուջե	*Սոցիալական ծախսերը Փաստացի պետական բյուջեի նկատմամբ (%)*	*Փաստացի պետական բյուջեն ՀՆԱ-ի(3,102,815.1) նկատմամբ (%)*	*Փաստացի պետական բյուջե*	*Սոցիալական ծախսերը Փաստացի պետական բյուջեի նկատմամբ (%)*	*Փաստացի պետական բյուջեն ՀՆԱ-ի (3,501,637.8) նկատմամբ (%)*
ընդամենը ծախսեր	929,108.6	100.0%	29.6%	954,316.5	100.0%	27.6%
այդ թվում						
սոցիալական ծախսեր	407,331.9	43.8%	13.0%	398,089.4	41.7%	11.5%
առողջապահություն	56,168.8	6.0%	1.8%	56,130.8	5.9%	1.6%
կրթություն	107,529.0	11.6%	3.4%	97,790.1	10.2%	2.8%
սոցիալական պաշտպանություն	243,634.1	26.2%	7.8%	244,168.5	25.6%	7.1%

	2011			2012		
	Փաստացի պետական բյուջե	*Սոցիալական ծախսերը Փաստացի պետական բյուջեի նկատմամբ (%)*	*Փաստացի պետական բյուջեն ՀՆԱ-ի(3,102,815.1) նկատմամբ (%)*	*Փաստացի պետական բյուջե*	*Սոցիալական ծախսերը Փաստացի պետական բյուջեի նկատմամբ (%)*	*Փաստացի պետական բյուջեն ՀՆԱ-ի (3,501,637.8) նկատմամբ (%)*
ընդամենը ծախսեր	986,509.2	100.0%	26.1%	1,006,102.2	100.0%	25.2%
այդ թվում						
սոցիալական ծախսեր	425,573.1	43.1%	11.3%	459,014.1	45.6%	11.5%
առողջապահություն	63,312.4	6.4%	1.7%	64,499.0	6.4%	1.6%
կրթություն	106,085.0	10.8%	2.8%	102,783.5	10.2%	2.6%
սոցիալական պաշտպանություն	256,1076.3	25.9%	6.8%	291,731.6	29.0%	7.3%

58. ՀՀ 2009-2012 թթ. արտաքին աջակցությամբ իրականացված ծախսերը (մլն. դրամ).

2009	2010

	Փաստացի պետական բյուջե	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսեր	%	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսերը ՀՆԱ-ի (3,102,815.1) նկատմամբ (%)	Փաստացի պետական բյուջե	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսեր	%	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսերը ՀՆԱ-ի (3,501,637.8) նկատմամբ (%)
ընդամենը ծախսեր	929,108.6	106,161.8	11.43%	3.42%	954,316.5	99,333.9	10.4%	2.84%
այդ թվում								
ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	113,006.6	1,282.44	1.13%	0.04%	143,280.5	1,513.8	1.1%	0.04%
պաշտպանություն	130,211.5	0.00	0.00%	0.00%	147,555.9	0.00	0.0%	0.00%
հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	69,463.8	2,865.62	4.13%	0.09%	67,443.1	2,385.25	3.5%	0.07%
տնտեսական հարաբերություններ	133,835.1	83,597.47	62.46 %	2.69%	112,451.7	73,576.36	65.4%	2.10%
շրջակա միջավայրի պաշտպանություն	3,913.3	1,287.92	32.91 %	0.04%	4,926.1	2,563.24	52.0%	0.07%
բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	21,105.9	10,505.27	49.77 %	0.34%	42,817.9	11,645.95	27.2%	0.33%
առողջապահություն	56,168.8	4,616.87	8.22%	0.15%	56,130.8	4,874.01	8.7%	0.14%
հանգիստ, մշակույթ և կրոն	16,297.7	0.00	0.00%	0.00%	16,102.6	79.77	0.5%	0.00%
կրթություն	107,529.0	1,782.49	1.66%	0.06%	97,790.1	2,566.91	2.6%	0.07%
սոցիալական պաշտպանություն	243,634.1	223.73	0.09%	0.01%	244,168.5	128.64	0.1%	0.00%
հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	33,943.0	0.00	0.00%	0.00%	21,649.4	0.00	0.0%	0.00%

	2011				2012			
	Փաստացի պետական բյուջե	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսեր	%	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսերը ՀՆԱ-ի (3,102,815.1) նկատմամբ (%)	Փաստացի պետական բյուջե	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսեր	%	Արտաքին աջակցությամբ իրականացված ծախսերը ՀՆԱ-ի (3,501,637.8) նկատմամբ (%)
ընդամենը ծախսեր	986,509.2	73,719.0	7.5%	1.95%	1,006,102.2	58,241.6	5.8%	1.46%
այդ թվում								
ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	154,107.9	1,873.1	1.2%	0.05%	160,488.8	2,454.5	1.5%	0.06%
պաշտպանություն	145,491.0	0.00	0.0%	0.00%	152,766.8	0.00	0.0%	0.00%
հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	72,517.1	2,362.65	3.3%	0.06%	76,668.6	1,285.4	1.7%	0.03%
տնտեսական հարաբերություններ	83,955.7	49,275.63	58.7%	1.30%	71,086.7	32,110.6	45.2%	0.80%
շրջակա միջավայրի պաշտպանություն	6,630.4	2,225.81	33.6%	0.06%	7,032.2	3,341.8	47.5%	0.08%
բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	43,848.5	12,081.39	27.6%	0.32%	14,303.5	8,279.6	57.9%	0.21%
առողջապահություն	63,312.4	3,669.09	5.8%	0.10%	64,499.0	4,598.6	7.1%	0.12%
հանգիստ, մշակույթ և կրոն	17,581.4	40.77	0.2%	0.00%	22,821.8	3,447.5	15.1%	0.09%
կրթություն	106,085.0	2,080.66	2.0%	0.06%	102,783.5	2,179.0	2.1%	0.05%
սոցիալական պաշտպանություն	256,176.3	109.95	0.0%	0.00%	291,731.6	544.6	0.2%	0.01%

հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	36,803.5	0.00	0.0%	0.00%	41,919.7	0.00	0.0%	0.00%

B. Պետության սահմանադրական, քաղաքական և իրավական համակարգը

59. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ընդունվել է 1995 թվականի հուլիսի 5-ին տեղի ունեցած համապետական հանրաքվեով: Սահմանադրության մեջ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերին համահունչ փոփոխություններ են կատարվել 2005 թվականի նոյեմբերի 27-ին՝ հանրաքվեի միջոցով: Հուլիսի 5-ը Հայաստանի Հանրապետությունում նշվում է որպես Սահմանադրության օր:

60. Ըստ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է, որում ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով (Հոդվածներ 1–2): Սահմանադրության 5–րդ հոդվածն ամրագրում է, որ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման հիման վրա:

61. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:

62. Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմում նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կամ հաստատված միջազգային պայմանագրերը, որոնք ՀՀ օրենքների նկատմամբ ունեն գերակայություն, իսկ Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը ուղղակի չեն կարող վավերացվել (Հոդված 6):

63. Հանրապետության Նախագահը պետության գլուխն է, ով հետևում է Սահմանադրության պահպանմանը և ապահովում է օրենսդիր գործադիր ու դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության Նախագահը ՀՀ անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է:

64. Հանրապետության Նախագահն ընտրվում է ՀՀ քաղաքացիների կողմից՝ հինգ տարի ժամկետով: Այս պաշտոնում կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, վերջին տասը տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին տասը տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանրապետության Նախագահի պաշտոնում:

65. ՀՀ Նախագահի լիազորություններն ամրագրված են Սահմանադրության 55-րդ հոդվածով: ՀՀ Նախագահը ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի ընդունած օրենքները, սահմանադրությամբ նախատեսված դեպքերում արձակում է Ազգային ժողովը և նշանակում արտահերթ ընտրություններ, ինչպես նաև նշանակում է վարչապետ՝ Ազգային ժողովում պատգամավորական տեղերի բաշխման և պատգամավորական խմբակցությունների հետ խորհրդակցությունների հիման վրա: Նախագահը վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է կառավարության անդամներին: Նա հանդիսանում է ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը, ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունը միջազգային հարաբերություններում, իրականացնում է արտաքին քաղաքականության ընդհանուր ղեկավարումը, կնքում է միջազգային պայմանագրեր, Ազգային ժողովի վավերացմանն է ներկայացնում միջազգային պայմանագրեր և ստորագրում դրանց վավերագրերը, հաստատում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը:

66. Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է Ազգային ժողովը, որը կազմված է հարյուր երեսունմեկ պատգամավորից: Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին հինգ տարում ՀՀ քաղաքացի հանդիսացող, վերջին հինգ տարում Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող յուրաքանչյուր ոք: Ազգային ժողովում օրենսդրական նախաձեռնության իրավունքը պատկանում է պատգամավորներին և կառավարությանը:

67. Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն: Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ հայտարարում է համաներում, վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը, որոշում է ընդունում պատերազմ հայտարարելու և խաղաղություն հաստատելու մասին: Ազգային ժողովի նիստ գումարելու անհնարինության դեպքում պատերազմ հայտարարելու հարցը լուծում է Հանրապետության Նախագահը: Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ կարող է անվստահություն հայտնել կառավարությանը:

68. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրությամբ ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը: Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին:

69. Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքի 103-րդ հոդվածի՝ Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական և մեծամասնական ընտրակարգերով: 90 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝

կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից, 41 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր:

70. 2012թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների արդյունքում ձևավորված ՀՀ ԱԺ հինգերորդ գումարման խորհրդարանում խմբակցությունները ստացել են հետևյալ բաշխվածությունը.

Խմբակցությունը	*Պատգամավորների քանակը*	*Պատգամավորների թվի տոկոսային հարաբերակցությունը*
«Հանրապետական» (ՀՀԿ) խմբակցություն	70	53.4 %
«Բարգավաճ Հայաստան» խմբակցություն	36	27.5 %
«Հայ ազգային կոնգրես» խմբակցություն	7	5.3 %
«Օրինաց երկիր» խմբակցություն	6	4.6 %
«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» խմբակցություն	5	3.8 %
«Ժառանգություն» խմբակցություն	4	3.1 %
Խմբակցություններում և պատգամավորական խմբերում չընդգրկված պատգամավորներ	3	2.3 %
Ընդհանուր	131	100 %

71. 2012թ. մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների արդյունքում ձևավորված ՀՀ ԱԺ հինգերորդ գումարման խորհրդարանի կազմում ընդգրկվել են 14 կին պատգամավորներ (պատգամավորների ընդհանուր թվի 10 %-ը)

72. ՀՀ Ազգային ժողովում կանանց ու տղամարդկանց բաշխվածությունը 2006-2010թթ.՝ ըստ սեռի.

	2006		*2007*		*2008*		*2009*		*2010*	
	Կ	S	Կ	S	Կ	S	Կ	S	Կ	S
Ընդամենը (մարդ)	7	124	12	118	11	120	12	119	12	119
Ընդամենը (տոկոսներով)	5	95	9	91	8	92	9	91	9	91

73. Ըստ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության տվյալների՝ ՀՀ-ում 2013թ. դրությամբ գրանցվել և գործում են 76 քաղաքական կուսակցություններ, իսկ 3 կուսակցություններ գտնվում են լուծարման գործընթացում:

74. Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանությունը պատկանում է կառավարությանը, որը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը կառավարությունը մշակում և իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ: Կառավարության իրավասությանն են ենթակա պետական կառավարման բոլոր այն հարցերը, որոնք օրենքով վերապահված չեն այլ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների: Կառավարությունը կազմված է վարչապետից և նախարարներից: Վարչապետը ղեկավարում է կառավարության գործունեությունը և համակարգում նախարարների աշխատանքը:

75. Կառավարության գործառույթների թվում են՝ պետական բյուջեի կատարման ապահովումը, պետական սեփականության կառավարումը, ֆինանսատնտեսական, վարկային և հարկային միասնական պետական քաղաքականության իրականացումը, Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումը, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնապահպանության բնագավառներում պետական քաղաքականության իրականացումը և այլն:

76. Հայաստանի Հանրապետությունում դատական իշխանությանն առնչվող սահմանադրական դրույթները ամրագրված են Սահմանադրության 6–րդ գլխով, որը, մասնավորապես սահմանում է, որ Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

77. Հայաստանի Հանրապետությունում գործում են ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վերաքննիչ դատարանները և վճռաբեկ դատարանը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև մասնագիտացված դատարաններ: Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով: Արտակարգ դատարանների ստեղծումն արգելվում է:

78. Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը, որին վերապահված որոշել ՀՀ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կառավարության, վարչապետի, տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանը մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է նրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը: Բացի այդ սահմանադրական դատարանին է վերապահված նաև հանրաքվեների, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերի լուծումը:

79. Սահմանադրությամբ և օրենքով սահմանված կարգով ձևավորվում և գործում է նաև արդարադատության խորհուրդը, որի կազմի մեջ մտնում են ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ հինգ տարի ժամկետով ընտրված ինը դատավորներ, ինչպես նաև Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի կողմից նշանակված երկուական իրավաբան-գիտնականներ:

80. Արդարադատության խորհուրդը կազմում և Հանրապետության Նախագահի հաստատմանն է ներկայացնում դատավորների թեկնածությունների ցուցակը և դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները, որոնց հիման վրա կատարվում են նշանակումները: Սահմանադրական խորհուրդը դատավորներին ենթարկում է կարգապահական պատասխանատվության, առաջարկ է ներկայացնում Հանրապետության Նախագահին դատավորի լիազորությունները դադարեցնելու մասին, դատավորին կալանավորելու, նրան որպես մեղադրյալ ներգրավելու կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու մասին:

81. Դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անփոփոխելի են: Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը պաշտոնավարում են մինչև 65 տարին լրանալը: Արդարադատություն իրականացնելիս դատավորը և սահմանադրական դատարանի անդամն անկախ են, ենթարկվում են միայն Սահմանադրությանը և օրենքին:

82. Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող կալանավորվել, ներգրավվել որպես մեղադրյալ, ինչպես նաև նրանց նկատմամբ չի կարող դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցվել՝ առանց համապատասխանաբար արդարադատության խորհրդի կամ սահմանադրական դատարանի համաձայնության: Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող ձերբակալվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալումն իրականացվում է հանցագործության կատարման պահին կամ անմիջապես դրանից հետո: Նման դեպքերում ձերբակալման մասին անմիջապես տեղեկացվում են Հանրապետության Նախագահը և համապատասխանաբար վճռաբեկ դատարանի նախագահը կամ սահմանադրական դատարանի նախագահը:

83. Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել իրենց պարտականությունների հետ չկապված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, պաշտոն առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից: Դատավորը և սահմանադրական դատարանի անդամը չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ զբաղվել քաղաքական գործունեությամբ:

84. Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից: Միևնույն ժամանակ սահմանադրությունը սահմանում է, որ «Հայաստանի Հանրապետությունը ճանաչում է Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում»: ՀՀ և Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու առանձնահատուկ

հարաբերությունները կարգավորվում են 2007թ. ընդունված օրենքով, ինչի հնարավորությունը նախատեսված է սահմանադրությամբ:

85. Սահմանադրության 26-րդ հոդվածով ամրագրվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

86. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

87. Հայաստանի Հանրապետությունում ընտրելու իրավունք ունեն քվեարկության անցկացման օրը ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիները: ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք կարող են մասնակցել միայն տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին: ՀՀ ընտրական օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձինք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ընտրության իրավունք ունեն ընտրությունն անցկացնող համայնքի բնակչության ռեգիստրում մինչև քվեարկության օրն առնվազն վեց ամսվա հաշվառում ունենալու դեպքում:

88. ՀՀ Նախագահի 2013թ. ընտրությունների նախնական ցուցակներով ընտրողների թիվը կազմել է 2,510,887 ընտրող (բնակչության ընդհանուր թվի 83 %-ը), որից 1,166,303-ը արական սեռի, իսկ 1,344,584-ը իգական սեռի ներկայացուցիչներ են:

89. ՀՀ քաղաքացի չհանդիսացող և ընտրելու իրավունք ունեցող անձանց թիվը 2013թ. սեպտեմբերի 5-ի դրությամբ կազմում է 7,758 ընտրող (բնակչության ընդհանուր թվի 0.25 %-ը):

90. Վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ-ում Հանրապետության Նախագահի հերթական ընտրություններն անցկացվել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ժամկետում՝ 2013 թվականի փետրվարի 18-ին և 2008 թվականի փետրվարի 19-ին: Նույն ժամանակահատվածում Ազգային ժողովի հերթական ընտրությունները ևս անցկացվել ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ժամկետում՝ 2012 թվականի մայիսի 6-ին և 2007 թվականի մայիսի 12-ին:

91. 2011թ. մայիսի 26-ին ընդունված ՀՀ ընտրական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը: 2012 թվականի համար տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր էին սահմանվել՝ փետրվարի 12-ը, հուլիսի 8-ը, սեպտեմբերի 9-ը և սեպտեմբերի 23-ը՝ հստակորեն պահպանելով ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ ընտրական օրենսդրությամբ տեղական

ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ անցկացնելու համար սահմանված ժամկետները: Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների նշանակման, ինչպես նաև դրանց անցկացման ժամկետների խախտումներ չեն գրանցվել նաև 2008 թվականին:

92. Բնակչության մասնակցությունը 2007թ. ՀՀ Ազգային ժողովի և 2008թ. ՀՀ Նախագահի ընտրություններին՝ ըստ վարչատարածքային բաժանման.

	2007			*2008*		
Մարզ	*Ընտրողների ընդհանուր թիվը*	*Քվեարկության մասնակիցների թիվը*	*Մասնակցության %*	*Ընտրողների ընդհանուր թիվը*	*Քվեարկության մասնակիցների թիվը*	*Մասնակցության %*
Երևան	751083	403284	53.69	763708	540630	70.79
Արագածոտն	99238	70268	70.81	105137	71915	68.4
Արարատ	191832	128954	67.22	194357	142341	73.24
Արմավիր	201463	120957	60.04	204947	138716	67.68
Գեղարքունիք	173041	109786	63.45	176466	136658	77.44
Լոռի	224029	133135	59.43	226579	152037	67.1
Կոտայք	210191	132026	62.81	214489	155528	72.51
Շիրակ	212980	118692	55.73	215810	138268	64.07
Սյունիք	105799	74286	70.21	117801	89074	75.61
Վայոց Ձոր	45133	32019	70.94	45743	32819	71.75
Տավուշ	104933	68133	64.93	105744	73041	69.07
Ընդհանուր	**2319722**	**1391540**	**59.99**	**2370781**	**1671027**	**70.48**

93. Բնակչության մասնակցությունը 2012թ. ՀՀ Ազգային ժողովի, 2012թ. տեղական ինքնակառավարման մարմինների և 2013թ. ՀՀ Նախագահի ընտրություններին՝ ըստ վարչատարածքային բաժանման.

2012	*2012 ՏԻՄ*	*2013*

Մարզ	Ընտրողների ընդհանուր թիվը	Քվեարկությանմասնակիցների թիվը	Մասնակցության %	Ընտրողների ընդհանուր թիվը	Քվեարկությանմասնակիցների թիվը	Մասնակցության %	Ընտրողների ընդհանուր թիվը	Քվեարկությանմասնակիցների թիվը	Մասնակցության %
Երևան	814225	483263	59.35	-	-	-	824859	445725	54.04
Արագածոտն	113690	78918	69.42	104708	63111	60.27	114323	72769	63.65
Արարատ	212317	149389	70.36	197040	102491	52.02	213038	157927	74.13
Արմավիր	222641	125092	56.19	219604	101746	46.33	224622	128637	57.27
Գեղարքունիք	185981	122785	66.02	170767	88728	51.96	186456	128881	69.12
Լոռի	236441	140006	59.21	227437	115001	50.56	237494	143318	60.35
Կոտայք	231710	150453	64.93	231185	108596	46.97	232594	138231	59.43
Շիրակ	228732	131644	57.55	223149	99442	44.56	229265	132939	57.98
Սյունիք	121433	87892	72.38	101578	61808	60.85	109384	71979	65.8
Վայոց Ձոր	47412	31748	66.96	43690	26873	61.51	47227	29577	62.63
Տավուշ	108324	71668	66.16	86924	53250	61.26	108560	71278	65.66
Ընդհանուր	**2522906**	**1572858**	**62.34**	**1606082**	**821046**	**51.12**	**2527822**	**1521261**	**60.18**

94. ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների գործունեության մասին իրավական նորմերն ամրագրված են ՀՀ Սահմանադրությունում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, «Հասարակական կազմակերպությունների մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքներում, ինչպես նաև ՀՀ միջազգային պայմանագրերում:

95. 2001թ. դեկտեմբերի 27–ին ուժի մեջ մտած «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-268) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում այլ անձանց հետ միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու մարդու՝ սահմանադրորեն ամրագրված իրավունքն իրականացնելիս ծագող իրավահարաբերությունները՝ կապված հասարակական կազմակերպությունների ստեղծման, գործունեության, վերակազմակերպման և լուծարման հետ:

96. Օրենքի 3–րդ հոդվածն ամրագրում է «հասարակական կազմակերպություն» հասկացությունը, համաձայն որի հասարակական կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

97. Մարդու՝ միավորումներ կազմելու իրավունքը ներառում է այլոց հետ ազատորեն միավորում ստեղծելու, նրան անդամագրվելու (մասնակցելու), նրա գործունեությանը մասնակցելու և անդամությունից (մասնակցությունից) անարգել դուրս գալու իրավունքը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից և քաղաքացիությունից: Այս իրավունքն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կարող է սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ:

98. Միավորումը կարող է պետական գրանցում ստանալ որպես հասարակական կազմակերպություն՝ գրանցման պահից ձեռք բերելով իրավաբանական անձի կարգավիճակ: Միավորման պետական գրանցումը, ապահովելով միավորման նպատակների իրականացումն իրավաբանական անձի կազմավորման միջոցով, չի սահմանափակում միավորումներ կազմելու մարդու իրավունքը՝ առանց պետական գրանցման այդպիսի միավորումներ ստեղծելու, դրանց միջոցով գործունեություն ծավալելու առումով:

99. Ըստ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության տվյալների՝ ՀՀ-ում գրանցվել են 5512 հասարակական կազմակերպություններ:

Հանցավորության և արդարադատության համակարգի վերաբերյալ տվյալներ

100. Սպանությունների և կյանքի համար վտանգավոր հանցագործությունների թիվն ու մասնաբաժինը.

		2008		*2009*		*2010*		*2011*		*2012*	
		Ընդամենը	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*
Սպանություն		78	2.4	68	2.1	41	1.3	60	1.8	50	1.5
Սպանություն հանցատեսակով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը		56	1.7	66	2.0	44	1.4	38	1.3	37	1.2
Այդ թվում՝	*կին*	3	0.1	5	0.2	2	0.1	1	0.03	0	0.0
	անչափահաս	2	0.1	1	0.03	2	0.1	0	0.0	0	0.0
	նախկինում դատված	16	0.5	17	0.5	3	0.1	5	0.2	7	0.2
Սպանության փորձ		30	0.9	29	0.9	27	0.8	29	0.9	25	0.8
Սպանության փորձով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը		14	0.4	25	0.8	27	0.8	29	1.0	21	0.7

	կին	0	0.0	1	0.03	1	0.03	1	0.03	0	0.0
Այդ թվում՝	*անչափահաս*	1	0.03	0	0.0	1	0.03	0	0.0	1	0.03
	նախկինում դատված	3	0.1	2	0.1	5	0.2	8	0.3	2	0.1

101. Բռնության և այլ ծանր հանցագործությունների համար (սպանություն, կողոպուտ, ավազակություն, մաքսանենգություն) կալանավորված (դատական մարմիններին փոխանցված) և դատապարտված անձանց թիվն ու մասնաբաժինը.

		2008		2009		2010		2011		2012	
		Ընդամենը	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*
Ձերբակալվածների թիվը		1390	43.0	1723	53.1	1637	50.3	1403	46.5	1228	40.6
Դատապարտյալների թիվը		2629	81.3	3219	99.2	3686	113.3	3279	108.7	2863	94.7
Ազատազրկման դատապարտվածների թիվը		1326	41.0	2025	62.4	2118	65.1	2039	67.6	1549	51.2
	Սպանություն	44	1.4	58	1.8	43	1.3	33	1.1	26	0.9
Այդ թվում՝	*Կողոպուտ*	50	1.5	52	1.6	61	1.9	62	2.1	50	1.7
	Ավազակություն	59	1.8	72	2.2	101	3.1	83	2.8	58	1.9
	Մաքսանենգություն	25	0.8	54	1.7	54	1.7	37	1.2	12	0.4

102. Գրանցված սեռական բռնության դեպքերի և քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը.

	2008		2009		2010		2011		2012	
	Ընդամենը	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Ընդամենը*	*100000 անձի և բնակչի հաշվով*
Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ	63	1.9	73	2.2	82	2.5	71	2.2	105	3.2
Բռնաբարություն	15	0.5	15	0.5	11	0.3	10	0.3	14	0.4
Բռնաբարություն հանցատեսակով քրեական պատասխանատվության ենթարկված անձանց թիվը	11	0.3	12	0.4	10	0.3	8	0.3	5	0.2

	կին	1	0.03	0	0.0	0	0.0	0	0.0	0	0.0
Այդ թվում՝	*անչափահաս*	0	0.0	1	0.03	0	0.0	0	0.0	0	0.0
	նախկինում դատված	3	0.1	0	0.0	2	0.1	1	0.0	0	0.0

103. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետությունում քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալին կալանքի տակ պահելու (կալանավորման) ժամկետը չի կարող երկու ամսից ավելի լինել: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նշված երկամսյա ժամկետը, հաշվի առնելով գործի առանձնակի բարդությունը, դատարանի կողմից կարող է երկարաձգվել մինչև վեց ամիս, իսկ բացառիկ դեպքերում, երբ անձը մեղադրվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու մեջ' մինչև տասներկու ամիս: Հետևաբար մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված կալանավորման ընդհանուր նվազագույն ժամկետը կազմում է մինչև 2 ամիսը, ընդհանուր առավելագույնը՝ մինչև 1 տարին: Վերջին 5 տարվա ընթացքում որպես խափանման միջոց ընտրված կալանավորման առավել նվազագույն ժամկետը 1 դեպքով կազմել է 8 օր, իսկ առավելագույն ժամկետը 14 դեպքով կազմել է մինչև 1 տարի:

104. Ազատազրկված դատապարտվածների թվաքանակն ըստ ազատազրկման ժամկետների.

	2008		*2009*		*2010*		*2011*		*2012*	
	մարդ	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*
1 տարի ներառյալ	287	8.87	320	9.89	653	20.19	620	19.17	613	18.95
1 տարուց ավել, մինչև 2 տարի ներառյալ	288	8.9	292	9.03	828	25.60	636	19.67	444	13.73
2 տարուց ավել, մինչև 3 տարի ներառյալ	311	9.6	293	9.06	661	20.44	565	17.47	386	11.94
3 տարուց ավել, մինչև 5 տարի ներառյալ	317	9.8	387	11.97	544	16.82	458	14.16	517	15.99
5 տարուց ավել, մինչև 8 տարի ներառյալ	148	4.6	198	6.12	289	8.94	226	6.99	173	5.35
8 տարուց ավել, մինչև 10 տարի ներառյալ	58	1.8	58	1.79	75	2.32	63	1.95	20	0.62

10 տարուց ավել, մինչև 15 տարի ներառյալ	24	0.7	39	1.21	54	1.67	45	1.39	39	1.21
Ցմահ	5	0.2	13	0.40	12	0.37	3	0.09	1	0.03
Ընդամենը	**1438**	**44.5**	**1600**	**49.47**	**3116**	**96.35**	**2616**	**80.89**	**2193**	**67.81**

105. Բռնի և այլ ծանր հանցագործություն կատարած դատապարտվածների թվաքանակը

	2008		*2009*		*2010*		*2011*		*2012*	
	մարդ	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*
Մաքսանենգություն	34	1.1	49	1.5	58	1.8	61	1.9	44	1.4
Բանդիտիզմ	3	0.1	0	0.0	2	0.1	0	0.0	0	0.0
Դիտավորյալ սպանություն	59	1.8	56	1.7	76	2.4	50	1.5	43	1.3
Անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով կատարված սպանություն	6	0.2	0	0.0	3	0.1	1	0.0	1	0.0
Անզգույշ սպանություն	8	0.2	0	0.0	7	0.2	8	0.2	3	0.1
Դիտավորյալ ծանր մարմնական վնասվածք	110	3.4	129	4.0	148	4.6	110	3.4	95	2.9
Դիտավորյալ միջին ծանրության մարմնական վնասվածք	29	0.9	37	1.1	19	0.6	33	1.0	26	0.8
Բռնաբարություն	12	0.4	11	0.3	8	0.2	2	0.1	12	0.4
Իշխանության ներկայացուցչին կատմամբ բռնություն գործադրելը	0	0.0	53	1.6	51	1.6	57	1.8	37	1.1
Ծեծը	0	0.0	16	0.5	44	1.4	31	1.0	56	1.7
Մարդուն առևանգելը	0	0.0	37	1.1	62	1.9	48	1.5	48	1.5
Կողոպուտ	91	2.8	64	2.0	94	2.9	67	2.1	67	2.1
Ավազակություն	66	2.0	59	1.8	94	2.9	72	2.2	37	1.1
Գողություն	632	19.5	693	21.4	913	28.2	781	24.1	584	18.1
Խարդախություն	85	2.6	150	4.6	219	6.8	152	4.7	134	4.1

Յուրացում կամ վատնում	42	1.3	74	2.3	87	2.7	74	2.3	56	1.7
Խուլիգանություն	276	8.5	353	10.9	420	13.0	480	14.8	299	9.2
Թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ	429	13.3	520	16.1	626	19.4	492	15.2	532	16.5
Ապօրինաբար հրազեն, ռազմամթերք կամ պայթուցիկ նյութեր կրելը, պահելը, պատրաստելը, ձեռքբերելը կամ վաճառելը	85	2.6	79	2.4	104	3.2	52	1.6	78	2.4
Դատապարտվածների ընդհանուր թվաքանակը	3145	97.2	3580	110.7	4402	136.1	3940	121.8	3727	115.2

106. Արգելանքի տակ գտնված անձանց մահացության դեպքերի թիվը.

2008	*2009*	*2010*	*2011*	*2012*
1	17	48	35	29

107. Հայաստանի Հանրապետությունում 1990 թվականից ի վեր ոչ ոք մահապատժի չի ենթարկվել, քանի որ առկա է եղել մահապատժի մորատորիում: 2003թ. օգոստոսին ընդունված նոր քրեական օրենսգրքից դուրս է մնացել մահապատիժը որպես պատժամիջոց կիրառելու մասին դրույթը: Նույն տարվա սեպտեմբերին Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի՝ մահապատժի վերացման վերաբերյալ Թիվ 6 արձանագրությունը: Իսկ 2005թ. նոյեմբերին լրացված ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածը սահմանում է, որ «յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: 2006թ. մայիսին Հայաստանը ստորագրել է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի՝ բոլոր պայմաններում մահապատժի վերացման վերաբերյալ Թիվ 13 արձանագրությունը:

108. ՀՀ-ում դատավորների և դատախազների թիվը և մասնաբաժինը.

2008		*2009*		*2010*		*2011*		*2012*	
Մարդ	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*

Դատախազների թիվը	333	10.3	333	10.3	333	10.2	333	11.0	333	11.0
Դատավորների թիվը	216	6.7	216	6.7	211	6.5	215	7.1	215	7.1

109. Անվճար իրավաբանական օգնության համար դիմած և վերջինիս անվճար օգնությունը ստացած մեղադրյալների և կալանավորվածների մասնաբաժինը.

2008		*2009*		*2010*		*2011*		*2012*	
Մարդ	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*	*Մարդ*	*100000 անձի և բնակչի հաշվով*
2051	*63.4*	*2213*	*68.2*	*2415*	*74.3*	*2722*	*90.3*	*2458*	*81.3*

110. ՀՀ դատարաններ ստացված և ավարտված քրեական, քաղաքացիական և վարչական գործերի, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ դատարանում բողոքարկված և ավարտված գործերի քանակը.

	2009	*2010*	*2011*	*2012*
Ստացված քրեական, քաղաքացիական և վարչական գործերի քանակը	57648	59301	63004	66333
Որոնցից ավարտվել են	40102	41399	39794	43901
ՀՀ վերաքննիչ դատարանում բողոքարկված գործերի քանակը	4507	4844	6916	7300
Որոնցից ավարտվել են	3918	4278	6106	6244

111. 2008-2012 թթ. ՀՀ պետական բյուջեից ՀՀ ոստիկանությանը, ազգային անվտանգությանը, դատարաններին և դատախազությանը հատկացված ֆինանսական միջոցները (մլն. դրամ).

	2008		*2009*		*2010*	
	Փաստացի պետական բյուջե	*Տեսակարար կշիռն ընդամենը ծախսերում (%)*	*Փաստացի պետական բյուջե*	*Տեսակարար կշիռն ընդամենը ծախսերում (%)*	*Փաստացի պետական բյուջե*	*Տեսակարար կշիռն ընդամենը ծախսերում (%)*
ընդամենը ծախսերը	**810,574.5**	**100.0%**	**929,108.6**	**100.0%**	**954,316.5**	**100.0%**
այդ թվում՝						

հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	61,706.5	7.6%	69,463.8	7.5%	67,443.1	7.1%
այդ թվում՝						
ոստիկանություն	29,418.57	3.6%	34,047.20	3.7%	34,111.32	3.6%
ազգային անվտանգություն	12,597.30	1.6%	12,804.62	1.4%	11,935.10	1.3%
դատարաններ	6,947.75	0.9%	9,817.24	1.1%	8,792.40	0.9%
դատախազություն	2,497.78	0.3%	2,638.63	0.3%	2,664.84	0.3%

	2011		*2012*	
	Փաստացի պետական բյուջե	*Տեսակարար կշիռն ընդամենը ծախսերում (%)*	*Փաստացի պետական բյուջե*	*Տեսակարար կշիռն ընդամենը ծախսերում (%)*
ընդամենը ծախսեր	**986,509.2**	**100.0%**	**1,006,102.2**	**100.0%**
այդ թվում՝				
հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	72,517.1	7.4%	76,668.6	7.6%
այդ թվում՝				
ոստիկանություն	35,664.78	3.6%	39,819.38	4.0%
ազգային անվտանգություն	12,701.24	1.3%	13,452.37	1.3%
դատարաններ	9,446.33	1.0%	8,163.27	0.8%
դատախազություն	2,834.76	0.3%	2,801.18	0.3%

II. Մարդու իրավունքների պաշտպանության և տարածման հիմնական շրջանակները

C. Մարդու իրավունքներին առնչվող միջազգային նորմերի ընդունումը

Մարդու իրավունքներին առնչվող առանցքային միջազգային պայմանագրեր և արձանագրություններ

112. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է մարդու իրավունքներին առնչվող հետևյալ առանցքային միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները.

a) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.
b) Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966թ.
c) Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային Դաշնագիր, 1966թ.
d) Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, 1965թ.
e) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա, 1979թ.
f) Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիա, 1984թ.
g) Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, 1989թ.
h) Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային կից՝ Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր Արձանագրություն, 2000թ.
i) Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին կամընտիր Արձանագրություն, 2000թ.

113. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նաև Երեխայի իրավունքների մասին Կոնվենցիային կից՝ Զինված հակամարտություններին երեխաների մասնակցությանը վերաբերող կամընտիր Արձանագրությունը (2000թ.), սակայն հանդես է եկել հայտարարությամբ[1]:

[1] Հայտարարության տեքստը. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի՝ «յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը:» ՀՀ քաղաքացիների մասնակցությունը երկրի պաշտպանությանը կարգավորվում է «Զինապարտության մասին» ՀՀ օրենքով (1998թ. սեպտեմբերի 15) և «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքով (2002թ. հունիսի 3): Համաձայն «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի՝ «զինվորական ծառայությունը բաղկացած է ժամկետային և պահեստազորային զինվորական ծառայությունից. ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայությունից. պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժեր և այլ զորքեր զորակոչված ու սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը»: Համաձայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի՝ պարտադիր զինվորական ծառայության են զորակոչվում 18-ից մինչև 27 տարեկան արական սեռի զորակոչիկները և մինչև 35 տարեկան առաջին խմբի պահեստազորի սպաները, ովքեր առողջական վիճակի պատճառով ճանաչվել են

114. Հայաստանի Հանրապետությունը 2013թ. սեպտեմբերին ստորագրել է նաև Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիան (1990թ.) և պատրաստվում է վավերացնել այն:

Մարդու իրավունքներին առնչվող ՄԱԿ այլ կոնվենցիաներ և փաստաթղթեր

115. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նաև մարդու իրավունքներին առնչվող ՄԱԿ մի շարք այլ կոնվենցիաները և փաստաթղթեր.

a) Կոնվենցիա ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին, 1948թ.

b) Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա, 1951թ, և նույն կոնվենցիայի Փախստականների կարգավիճակի մասին արձանագրություն, 1967թ.

c) Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիա, 1954թ.

d) Ապաքաղաքացիության կրճատման մասին կոնվենցիա, 1961թ.

e) Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ ՄԱԿ-ի կոնվենցիա, 2000թ.

f) Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան լրացնող մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրություն, 2000թ.

g) Միավորված ազգերի կազմակերպության անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ Կոնվենցիան լրացնող ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ արձանագրություն, 2000թ.

h) Միավորված ազգերի կազմակերպության՝ անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող հրազենի, դրա հիմնամասերի և բաղադրիչների, ինչպես նաև դրա համար նախատեսված ռազմամթերքի անօրինական արտադրության և շրջանառության դեմ» արձանագրություն, 2001թ.

116. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Միջազգային քրեական դատարանի Կանոնադրությունը: Սակայն ՀՀ Սահմանադրական դատարանը 2004թ. օգոստոսի 13-ի իր որոշումով կասեցրեց վավերացման գործընթացը՝ գտնելով, որ Կանոնադրության որոշ դրույթներ հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

զինծառայության համար պիտանի՝ խաղաղ պայմաններում: Ելնելով վերոնշյալ օրենքների դրույթների՝ ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիները պարտավոր են ծառայել ՀՀ Զինված ուժերում: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է, որ 18 տարին չլրացած ՀՀ քաղաքացիները չեն կարող կանչվել ո՛չ պարտադիր և ո՛չ էլ պայմանագրային (կամավոր) զինվորական ծառայության»:

Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող կոնվենցիաներ

117. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող հետևյալ կոնվենցիաները.

a) Արդյունաբերությունում շաբաթական հանգստի մասին կոնվենցիա, 1921թ. (№ 14)

b) Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա, 1930թ. (№ 29)

c) Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա, 1930թ. (№ 29)

d) Արդյունաբերության և առևտրի մեջ աշխատանքի տեսչության մասին կոնվենցիա, 1947թ. (№ 81)

e) Միավորման ազատության և կազմակերպելու իրավունքի պաշտպանության մասին կոնվենցիա, 1948թ. (№ 87)

f) Կոնվենցիա միգրանտ աշխատողների մասին (լրացուցիչ դրույթներ), 1949թ. (№ 97)

g) Կոլեկտիվ բանակցություններին աջակցելու մասին կոնվենցիա, 1949թ. (№ 98)

h) Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին կոնվենցիա, 1951 (№ 100)

i) Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա, 1957թ. (№ 105)

j) Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին կոնվենցիա, 1958 (№ 111)

k) Զբաղվածության բնագավառում քաղաքականության մասին կոնվենցիա, 1964թ. (№ 122)

l) Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին կոնվենցիա, 1970թ. (№ 131)

m) Վճարովի արձակուրդի մասին վերանայված կոնվենցիա, 1970թ. (№ 132)

n) Նվազագույն տարիքի մասին, 1973թ. (№ 138)

o) Կոնվենցիա միգրանտ աշխատողների մասին (լրացուցիչ դրույթներ), 1975թ. (№ 143)

p) Պետական ծառայության բնագավառում աշխատանքային հարաբերությունների մասին կոնվենցիա, 1978 (№ 151)

q) Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիա, 1999թ. (№ 182)

Միավորված ազգերի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող կոնվենցիաներ

118. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Աշխատանքի միջազգային կազմակերպության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող հետևյալ կոնվենցիաները.

a) Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիա, 1960թ.

Միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Հաագայի կոնֆերանսի շրջանակներում ընդունված կոնվենցիաներ

119. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Միջազգային մասնավոր իրավունքի վերաբերյալ Հաագայի կոնֆերանսի շրջանակներում ընդունված հետևյալ կոնվենցիաները.

a) Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին կոնվենցիա, 1980թ.

b) Արտասահմանում արդարադատությունից օգտվելու հնարավորության ապահովման մասին կոնվենցիա, 1980թ.

c) Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին կոնվենցիա, 1993թ.

d) Ծնողական պարտականությունների և երեխայի պաշտպանությանն ուղղված միջոցների առնչությամբ իրավասության, կիրառելի իրավունքի, ճանաչման, իրականացման և համագործակցության մասին կոնվենցիա, 1996թ.

Ժնևյան կոնվենցիաներ և միջազգային հումանիտար իրավունքին առնչվող այլ պայմանագրեր

120. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է հետևյալ Ժնևյան կոնվենցիաները և միջազգային հումանիտար իրավունքին առնչվող պայմանագրերը.

a) Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին կոնվենցիա, 1949թ.

b) Ծովում զինված ուժերի կազմից վիրավորների, հիվանդների և նավաբեկյալների վիճակի բարելավման մասին Ժնևյան կոնվենցիա (II), 1949թ.

c) Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին Ժնևյան կոնվենցիա (III), 1949թ.

d) Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևյան կոնվենցիա (IV), 1949թ.

e) Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների արձանագրություն (Արձանագրություն 1), 1977թ.

f) Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին 1949 թվականի օգոստոսի 12-ի Ժնևի կոնվենցիաների արձանագրություն (Արձանագրություն 2), 1977թ.

Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող կոնվենցիաներ

121. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող հետևյալ կոնվենցիաները.

a) Կոնվենցիա Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին (փոփոխված 11-րդ արձանագրությամբ), 1950թ.

b) Արձանագրություն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (փոփոխված 11-րդ Արձանագրությամբ), 1952թ.

c) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 2 արձանագրություն, որով Մարդու իրավունքների եվրոպական դատարանին տրվում է խորհրդակցական կարծիք տալու իրավասություն, 1963

d) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 3 արձանագրություն, որով փոփոխվում են Կոնվենցիայի թիվ 29, 30 և 34 հոդվածները, 1963թ.

e) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 4 արձանագրություն, որով ապահովվում են կոնկրետ իրավունքներ և ազատություններ, որոնք ընդգրկված չեն Կոնվենցիայում և թիվ 1 արձանագրությունում, 1963թ.

f) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 5 արձանագրություն, որով փոփոխվում են Կոնվենցիայի թիվ 22 և 40 հոդվածները, 1966թ.

g) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 6 արձանագրություն մահապատժի վերացման վերաբերյալ, 1983թ.

h) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 7 արձանագրություն (փոփոխված 11-րդ Արձանագրությամբ), 1984թ.

i) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայի թիվ 8 արձանագրություն, 1985թ.

j) Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիա, 1987թ.

k) Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա, 1992թ.

l) Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրություն, 1993թ.

m) Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 2 արձանագրություն, 1993թ.

n) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 11 արձանագրություն, որով փոփոխվում է կոնվենցիայով ստեղծված վերահսկման մեխանիզմը, 1994թ.

o) Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիա, 1995թ.

p) Եվրոպայի խորհրդի արտոնությունների և անձեռնմխելիությունների մասին գլխավոր համաձայնագրի թիվ 6 արձանագրություն, 1996թ.

q) Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, 1996թ.

r) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրություն, 2000թ.

s) Լրացուցիչ արձանագրություն Կիբեռհանցագործությունների մասին Կոնվենցիայի՝ համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին, 2003թ.

t) Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 14 արձանագրություն, որով փոփոխվում է կոնվենցիայով ստեղծված վերահսկման համակարգը, 2004թ.

u) Եվրոպայի խորհրդի կոնվենցիա մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարի մասին, 2005թ.

Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող համաձայնագրեր

122. Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում ընդունված և մարդու իրավունքներին առնչվող հետևյալ համաձայնագրերը.

a) Մարդկանց, մարդկային օրգանների և հյուսվածքների առևտրի դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին համաձայնագիր, 2006թ.

b) Մարդկանց առքուվաճառքի դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ներքին գործերի նախարարությունների (ոստիկանությունների) համագործակցության մասին» համաձայնագիր, 2010թ.

D. Ազգային մակարդակում մարդու իրավունքների պաշտպանության շրջանակները

123. 2005թ. տեղի ունեցած հանրաքվեի միջոցով փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ամբողջությամբ ամրագրում է ՄԱԿ–ի 1948թ. Մարդու իրավունքների հռչակագրով և Եվրոպայի Խորհրդի 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայով սահմանված մարդու իրավունքները:

124. ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ մարդու և քաղաքացու՝ Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար: Այնուամենայնիվ, ըստ Սահմանադրության, վերոնշյալ հոդվածի Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:

125. Սահմանադրության 44-րդ հոդվածն էլ ամրագրում է, որ Մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Նման սահմանափակումը չի տարածվում Սահմանադրության 15 (կյանքի իրավունք), 17-22

(խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի անթույլատրելիություն, արդար դատավարություն) և 42 (Սահմանադրությամբ ամրագրված հիմնական իրավունքներով և ազատություններով՝ օրենքներով և միջազգային պայմանագրերով սահմանված այլ իրավունքներն ու ազատությունները չբացառելը) հոդվածներում նշված իրավունքների վրա:

126. Ըստ Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են, որոնք գտնվում են պետության պաշտպանության ներքո՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

127. Սահմանադրության 18–րդ հոդվածի համաձայն Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների, այդ թվում՝ իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ստանալու իրավունք:

128. Իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության խնդրով յուրաքանչյուր ոք իրավունք ունի, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, դիմել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին: Այս առնչությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 241[11] հոդվածն ամրագրում է միջազգային դատարան դիմելու իրավունքը: Այսպես՝ յուրաքանչյուր անձ, որը գտնում է, որ իրեն վերաբերող քաղաքացիական գործով ընդունված վերջնական դատական որոշմամբ խախտվել է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված իր իրավունքը (իրավունքները), Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող և քաղաքացիական գործեր քննելու իրավասություն ունեցող միջազգային դատարան դիմելու իրավունք ունի: Վերջնական դատական ակտ է համարվում առաջին ատյանի դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, բողոքարկման ոչ ենթակա, Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած և ուժի մեջ մտած, գործի քննությունը սկսելը և շարունակելը բացառող, ինչպես նաև գործն ըստ էության լուծող դատական ակտը:

129. Միջազգային դատարան դիմելու իրավունքը ծագում է վերջնական դատական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ համապատասխան միջազգային դատարանի կանոնակարգերով սահմանված պահից: Միջազգային դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց շրջանակը սահմանվում է տվյալ միջազգային դատարանի կանոնակարգերով:

130. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 103–րդ հոդվածով նախատեսված է, որ յուրաքանչյուր դատապարտյալ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, իրավունք ունի դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջպետական մարմիններին, եթե սպառված են

քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված իրավական պաշտպանության բոլոր միջոցները:

131. Հայաստանի Հանրապետությունը 2002թ. ապրիլի 26–ից հանդիսանում է Եվրոպայի Խորհրդի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի մասնակից պետություն: Կոնվենցիային անդամակցելով Հայաստանի Հանրապետությունը ընդունել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավազորությունը, որը տարածվում է այն բոլոր հարցերի վրա, որոնք վերաբերում են Կոնվենցիայի և նրան կից Արձանագրությունների դրույթների մեկնաբանմանն ու կիրառմանը:

132. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում 2002-2012թթ. Հայաստանի Հանրապետության դեմ հարուցված գործերի վերաբերյալ վճիռների ընդհանուր վիճակագրությունը՝ ըստ վճռի տեսակի և Կոնվենցիայով ամրագրված իրավունքի խախտման տեսակի.

Դատավարության տեսակը	*Վճիռների թիվը*
Դատավարություններ, որոնք գտել են առնվազն մեկ խախտում	42
Դատավարություններ, որոնք խախտում չեն գտել	2
Խաղաղ լուծումներ	-
Այլ դատավարություններ	2
Դատավարությունների ընդհանուր թիվը	**46**

Կոնվենցիայի խախտված հոդվածի բովանդակությունը	*Դատավարությունների թիվը*
Կյանքի իրավունք	-
Խոշտանգումների արգելում	1
Անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունք	7
Արդյունավետ հետաքննության պակաս	1
Ստրկության և հարկադիր աշխատանքի արգելում	-
Ազատության և անվտանգության իրավունք	20
Արդար դատաքննության իրավունք	16
Դատավարության երկարություն	-
Օրենքի չկիրառում	1
Պատիժ՝ բացառապես օրենքի հիման վրա	-
Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունք	1
Մտքի, խղճի և կրոնի ազատություն	3
Արտահայտվելու ազատություն	1
Հավաքների և միավորման ազատություն	7
Ամուսնանալու իրավունք	-
Իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք	1
Խտրականության արգելում	1
Սեփականության պաշտպանություն	7
Կրթության իրավունք	-
Ազատ ընտրությունների իրավունք	1

133. 2004թ. Հայաստանում հիմնադրվել է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որի գործունեությունը 2005թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվել է նաև ՀՀ Սահմանադրությամբ: Այսպես, մարդու՝ ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերով ամրագրված իրավունքների պաշտպանության համար ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով նախատեսված է մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք:

134. Սահմանադրության 83.1 հոդվածի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանը ընտրվում է Ազգային ժողովի կողմից պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ վեց տարի ժամկետով: Մարդու իրավունքների պաշտպանը պետք է լինի հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող անձ և համապատասխանի ԱԺ պատգամավորին ներկայացվող պահանջներին:

135. Համաձայն Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի՝ մարդու իրավունքների պաշտպանը անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ ղեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության հիմնարար սկզբունքներով:

136. Օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ բողոքը պետք է Պաշտպանին տրվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման մասին: Օրենքի 11-րդ հոդվածն էլ սահմանում է, որ Պաշտպանը, բողոքը ստանալով, որոշում է ընդունում՝ բողոքը քննարկման ընդունելու մասին, դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին, բողոքը չքննարկելու մասին, բողոքը ներկայացնողի համաձայնությամբ բողոքն այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար այն անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը:

137. Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով, ինչպես նաև դադարեցնում է բողոքի քննարկումը, եթե քննարկումն սկսելուց հետո շահագրգիռ անձը հայց կամ բողոք է ներկայացրել դատարան: Բողոքը չքննարկելու մասին որոշում ընդունելիս Պաշտպանը պարտավոր է դիմողին բացատրել այդ բողոքի քննարկման՝ օրենքով նախատեսված կարգը: Պաշտպանն ընդունված որոշման պատճենն ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

138. Բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ դրա պաշտոնատար այն անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են:

139. Պաշտպանն իրավասու է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործել իրենց պաշտպանության իրավական միջոցները:

E. Ազգային մակարդակում մարդու իրավունքների տարածման շրջանակները

140. Հայաստանի Հանրապետությունում ստեղծվել են մի շարք պետական կառույցներ և ենթակառույցներ, որոնք նպատակ ունեն ուշադրության կենտրոնում պահել մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող խնդիրները: Արդեն իսկ նշվել է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի մասին, որի հիմնադրումը նշանակալից քայլ էր՝ ուղղված երկրում մարդու իրավունքների կանոնակարգված իրականացման և պաշտպանության գործին: Պաշտպանի անկախությունը երաշխավորված է ՀՀ օրենսդրությամբ: 2013թ. Օմբուդսմենների միջազգային հանձնաժողովը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին շնորհել է «A» դասի բարձրագույն կարգավիճակ, ինչը վկայում է Պաշտպանի անկախ և օբյեկտիվ լինելու մասին:

141. ՀՀ Ազգային ժողովում ակտիվ գործունեություն է ծավալում Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը, որը ՀՀ օրենսդիրների ուշադրության կենտրոնում է պահում Հայաստանում մարդու իրավունքների խնդիրները՝ կազմակերպելով խորհրդարանական լսումներ ու քննարկումներ: Ի թիվս այլ գործառույթների՝ Հանձնաժողովի առանցքային խնդիրն է՝ քննարկել և եզրակացություններ տալ մարդու իրավունքներին առնչվող օրենսդրական նախաձեռնությունների ընդունման, միջազգային պայմանագրերի վավերացման, ինչպես նաև ՀՀ պետական բյուջեում մարդու իրավունքներին առնչվող հատկացումների վերաբերյալ:

142. 2000 թվականից ի վեր գործում է ՀՀ վարչապետին առընթեր Կանանց հարցերով խորհուրդ՝ Հայաստանում կանանց հիմնահարցերի լուծման ուղղությամբ կատարվող աշխատանքները համակարգելու նպատակով: Խորհրդի կազմում ընդգրկվել են գործադիր և օրենսդիր իշխանության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, ստեղծագործական միությունների և մշակույթի բնագավառի առավել աչքի ընկնող կին գործիչներ:

143. 2000 թվականից գործում է ՀՀ Նախագահի կարգադրությամբ հիմնադրված Ազգային փոքրամասնությունների համակարգող խորհուրդը, որի հիմնական նպատակն է՝ Հայաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքների և ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև այս ոլորտին առնչվող իրավական ակտերի նախագծերի քննարկումը, վերլուծությունը ու առաջարկությունների պատրաստումը: Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների պաշտպանվածությունն ապահովելը, նրանց միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելը, ինչպես նաև հատուկ կրթամշակութային, իրավական և այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելը: Խորհրդի անդամներն են ՀՀ-ում առկա 11 ազգային փոքամասնություններից առաջադրված երկուական ներկայացուցիչ:

144. 2004թ. ձևավորվել է ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը: Այն մասնակցում է ՀՀ կառավարության գործունեության ծրագրի կազմմանը, իրականացնում է «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված պետության և կրոնական կազմակերպությունների միջև հարաբերությունների կարգավորումն իրականացնող և «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց ավանդույթների պահպանումը, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքի պաշտպանությունը ապահովող» ՀՀ կառավարության կողմից լիազորված մարմնի գործառույթները:

145. 2008թ. ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծվել է Հանրային խորհուրդ, որի ուշադրության կենտրոնում են գտնվում նաև մարդու իրավունքներին առնչվող խնդիրները: Այսպես, Հանրային խորհրդում, ի թիվս այլ հանձնաժողովների, գործում են Քաղաքացիական հասարակության կայացման հարցերի, Ազգային փոքրամասնությունների հարցերի, Ժողովրդագրական և գենդերային հարցերի ու Կրոնի, սփյուռքի և միջազգային ինտեգրման հանձնաժողովները, որոնք սերտորեն առնչվում են Հայաստանում մարդու իրավունքների խնդիրներին: Հանրային խորհուրդն ունի խորհրդատվական մարմնի կարգավիճակ:

146. Հայաստանում շարունակվում է քաղաքացիական հասարակության կայացման գործընթացը: Վերջին տասնամյակում զգալիորեն ակտիվացել են հասարակական կազմակերպությունները, որոնց ՀՀ օրենսդրությունն ազատ գործելու հնարավորություն է ընձեռում: Հասարակական կազմակերպություններն ուղղակիորեն նպաստում են մարդու իրավունքների արժեքների տարածմանը և մեծ ներդրում ունեն այդ իրավունքների պաշտպանության գործում: Մասնավորապես, դրանք ակտիվորեն զբաղվում են երեխաների, կանանց, ազգային փոքրամասնությունների, երիտասարդության, թոշակառուների, ֆիզիկական սահմանափակ կարողություններով անձանց, փախստականների և ձերբակալված անձանց խնդիրներով: Հասարակական կազմակերպություններից շատերը պարբերական ուսումնասիրություններ են կատարում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, մշակում կանխարգելման և հանրային իրազեկման զանազան ծրագրեր: Միևնույն ժամանակ ՀՀ պետական կառույցներն ակտիվորեն համագործակցում են քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ընդգրկելով նրանց տարբեր խորհրդատվական մարմինների աշխատանքներում, ինչպես նաև կազմակերպելով տարբեր ֆորմատի համատեղ քննարկումներ:

147. ՀՀ-ն ուշադրություն է դարձնում մարդու իրավունքների կրթությանը՝ դիտարկելով այն որպես ժողովրդավարության զարգացմանը նպաստող կարևորագույն գործոն: Այսպես, 2001 թվականից Մարդու իրավունքները որպես առանձին կրթական առարկա ընդգրկվել է հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրում և դասավանդվում է 9-րդ դասարանում: Աշակերտներն ուսումնասիրում են նաև «Քաղաքացիական կրթություն» և «Պետություն և իրավունք» առարկաները:

148. Հայաստանի բուհերի «Իրավագիտություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույն պահանջները ներառում են հետևյալ դասընթացները. «Պետության և իրավունքի տեսություն», «Իրավունքի

նորմեր», «Օրինականություն», «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն», «Սահմանադրական իրավունք», «Մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակը, նրա սահմանադրական իրավունքները, ազատությունները և պարտականությունները, դրանց իրացման սահմանադրական երաշխիքները», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք», «Միջազգային իրավունք», «Միջազգային անվտանգության իրավունք» «Մարդու իրավունքները և միջազգային իրավունքը», «Միջազգային մարդասիրական իրավունք» և այլ նմանատիպ դասընթացներ:

149. Մարդու իրավունքների ուսուցման ուղղությամբ մեծ աշխատանք է տարվել ոչ միայն դասագրքերի մշակման, այլ նաև ուսուցիչների և դասախոսների վերապատրաստման նպատակով: Ընդ որում, այս աշխատանքներում մեծ ներդրում են ունեցել նաև հասարակական կազմակերպությունները, օրինակ «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի» կողմից ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կրթության տասնամյակի (1996-2004թթ.) ընթացքում հիմնադրվել է Մարդու իրավունքների հայկական դպրոցը, ուր միայն անցած վեց տարիների ընթացքում վերապատրաստվել է 360 ուսուցիչ: Այս աշխատանքներին գումարվում է նաև մարդու իրավունքների գրադարանների ցանցի հիմնումը: 2001 թվականից ի վեր հիմնադրվել են մարդու իրավունքների վեց գրադարաններ՝ որպես մարդու իրավունքների կրթության ռեսուրս կենտրոններ տարբեր մարզերում: «Մարդու իրավունքներ» առարկան դասավանդվում է նաև Հայաստանի բարձրագույն հաստատություններում, այդ թվում Երևանի պետական համալսարանում, գործում են նաև մարդու իրավունքների կրթության ՅՈՒՆԵՍԿՕ-ի ամբիոններ:

150. ՀՀ կառավարության կողմից մեծ ուշադրություն է դարձվում նաև առանձին մասնագիտական խմբերին այս ոլորտում վերապատրաստելու հարցերին, այդ թվում՝ տարբեր պետական գերատեսչությունների քաղաքացիական ծառայողների, իրավաբանների, ուժային կառույցների աշխատակիցների (ՀՀ ոստիկանություն, ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն), դատավորների և այլն: Որպես կրթական ծրագրերի հիմք են վերցվում մարդու իրավունքների միջազգային հիմնարար փաստաթղթերը, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և երկու միջազգային դաշնագրերը:

151. ՀՀ կառավարությունը վարում է մարդու իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացման քաղաքականություն՝ համագործակցելով միջազգային կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ: Կառավարությունը փորձում է նաև անմասն չմնալ միջազգային կոնվենցիաների թարգմանության և տարածման հարցում: Այսպես՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունն աջակցել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերի ժողովածուի հրատարակման աշխատանքներին՝ տրամադրելով փաստաթղթերի պաշտոնական թարգմանություններ:

152. Ամեն տարի ՀՀ պետական բյուջեում հատկացվում են համապատասխան ֆինանսական ծախսեր մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի համար: Այդ ֆինանսական միջոցներն ընդգրկվում են պետական մարմիններին և գերատեսչություններին հատկացվող համապատասխան ծախսերի թվում: Ընդհանուր և

համապարփակ վիճակագրություն ՀՀ-ում մարդու իրավունքներին հատկացվող ծախսերի մասին առկա չէ:

153. ՀՀ պետական բյուջեից ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին հատկացվող ծախսերը 2010-2013թթ.

	2010	*2011*	*2012*	*2013*
ՀՀ դրամ (հազար.)	125,433.6	163,100.5	173,894.8	176,613.6

F. Միջազգային մոնիթորինգային մարմիններին ազգային զեկույցներ ներկայացնելու գործընթացը

154. ՀՀ միջազգային պարտավորություններին համապատասխան ազգային զեկույցների պատրաստումը տեղի է ունենում ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի N 1483-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն:

155. Յուրաքանչյուր ազգային զեկույցի պատրաստման համար պատասխանատու է որոշակի պետական կառավարման մարմին: Եթե ազգային զեկույցի պատրաստումը բխում է ՀՀ միջազգային պայմանագրով սահմանված պարտավորությունից, ապա զեկույցների պատրաստման պատասխանատու մարմին է հանդիսանում տվյալ միջազգային պայմանագրի կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմինը: Եթե ազգային զեկույցի պատրաստումը բխում է ՀՀ մասնակցությամբ միջազգային կազմակերպությունների շրջանակներում ստանձնած պարտավորություններից, ապա ազգային զեկույցի պատրաստման պատասխանատու մարմին է հանդիսանում ՀՀ Նախագահի կամ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով նշանակված գերատեսչությունը:

156. Զեկույցների պատրաստման ընթացքում, ըստ անհրաժեշտության, կարող են ստեղծվել միջգերատեսչական աշխատանքային խմբեր կամ հանձնաժողովներ: Իրավասու գերատեսչությունն ազգային զեկույցի պատրաստմանը կարող է ներգրավել մասնագետների, փորձագետների և խորհրդատուների:

157. Իրավասու գերատեսչությունն ազգային զեկույցի նախագիծը մշակելուց հետո այն համաձայնեցնում է ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ շահագրգիռ պետական կառավարման մարմինների հետ: Կարծիքները ստանալուց և զեկույցն ամփոփելուց հետո իրավասու գերատեսչությունն ազգային զեկույցը ներկայացնում է ՀՀ կառավարության հաստատմանը:

158. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1793-Ա որոշմամբ սահմանվում են ազգային զեկույցների պատրաստման համար *պատասխանատու* պետական մարմինների և ներկայացնելու ժամկետների ցանկը:

Միջազգային փաստաթուղթը	*Ազգային զեկույցի համար պատասխանատու մարմինը*
Միջազգային կոնվենցիա ռասայական խտրականության բոլոր	ՀՀ արտաքին գործերի

ձևերի վերացման մասին	նախարարություն
Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Միջազգային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Կոնվենցիա կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Կոնվենցիա խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ	ՀՀ արդարադատության նախարարություն
Կոնվենցիա երեխայի իրավունքների մասին	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Կոնվենցիա հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Կամընտիր արձանագրություն “Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային կից զինված հակամարտությունների երեխաների մասնակցության վերաբերյալ	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Կամընտիր արձանագրություն “Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային կից մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
«Միջազգային կոնվենցիա կրթության բնագավառում խտրականության դեմ»	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Կոնվենցիա մշակութային ինքնաարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խրախուսման մասին	ՀՀ մշակույթի նախարարություն
Կոնվենցիա ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանության մասին	ՀՀ մշակույթի նախարարություն
«Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» կոնվենցիա (14 մայիսի, 1954 թ.)	ՀՀ մշակույթի նախարարություն
«Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիային կից 1999 թ. մարտի 26-ի երկրորդ արձանագրություն	ՀՀ մշակույթի նախարարություն
Տարածքային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիա	ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա	ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչություն
Մարդկանց շահագործման (թրաֆիքինգ) դեմ պայքարի մասին կոնվենցիա	ՀՀ արտաքին գործերի նախարարություն
Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

159. Ազգային զեկույցների պատրաստման գործընթացին ներգրավվում են նաև ոչ կառավարական սուբյեկտները, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները: Այդ նպատակով կազմակերպվում են հատուկ ֆորմատ ունեցող բաց քննարկումներ, որտեղ քննարկման են դրվում տվյալ զեկույցի դրույթները: Մասնակիցներն այս քննարկումների ընթացքում հնարավորություն ունեն ներկայացնել իրենց դիտողությունները և առաջարկները, որոնք հնարավորինս հաշվի են առնվում զեկույցի վերջնական տարբերակի մշակման ժամանակ:

160. Առաջընթացի վերաբերյալ զեկույցների (follow-up) մշակման աշխատանքները նախաձեռնում և համակարգում է ՀՀ արտաքին գործերի նախարարությունը: Ելնելով տվյալ միջազգային փաստաթղթի կամ կոնվենցիայի թեմատիկ ուղղվածությունից՝ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ՀՀ համապատասխան գերատեսչություններից հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը և փոխանցում միջազգային մոնիթորինգային մարմիններին:

G. Մարդու իրավունքներին առնչվող այլ տեղեկատվություն

161. 1992 թվականից դառնալով ՄԱԿ-ի անդամ և ընդունելով համամարդկային արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության և ժողովրդավարության հաստատման սկզբունքները որպես պետական գաղափարախոսության անբաժանելի մաս, Հայաստանն ակտիվորեն մասնակցում է այս համաշխարհային կազմակերպության շրջանակներում ծավալվող աշխատանքներին և համագործակցում կազմակերպության բազմաթիվ կառույցների և ստորաբաժանումների հետ:

162. ՄԱԿ-ում կայացած ընտրությունների արդյունքում, 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը Արևելաեվրոպական երկրների խմբից ընտրվել է ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովի անդամ և 2004 թվականին վերընտրվել, իսկ 2005-2006 թվականներին Հայաստանի ներկայացուցիչը եղել է հանձնաժողովի փոխնախագահ: Դա նախ և առաջ Հայաստանի միջազգային ճանաչման և հեղինակության բարձրացման վառ ապացույց էր, հատկապես՝ մարդու իրավունքների պաշտպանության ասպարեզում:

163. 2001 թվականի հունվարի 25-ին Հայաստանը դարձել է Եվրոպայի խորհրդի լիիրավ անդամ և համապատասխան պարտավորություններ ստանձնել երկրի իրավական համակարգը վերափոխելու և մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական արժեքներ որդեգրելու ուղղությամբ:

164. Մարդու իրավունքների ոլորտում մշակվել և իրականացվում են ծրագրեր, այդ թվում՝ «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը», որը 2008թ. վերանվանվել է «Կայուն զարգացման ծրագիր», «Գենդերային քաղաքականության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը», «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագիրը», «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015թթ. ազգային ծրագիրը», «Հաշմանդամների սոցիալական պաշտպանության 2006-2015թթ. ռազմավարությունը» և այլն:

165. Հայաստանի Հանրապետությունը լուրջ ձեռքբերումներ է գրանցել թրաֆիքինգի դեմ պայքարի բնագավառում: Իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, ինչպես

թրաֆիքինգի կանխարգելման, այնպես էլ զոհերի աջակցության ու պաշտպանություն ուղղությամբ: ՀՀ կառավարության 2013 թ. փետրվարի 28 N186-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետությունում 2013-2015 թվականների ընթացքում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի կազմակերպման չորրորդ ազգային ծրագիրը: Նույն թվականի հունիսին ԱՄՆ պետքարտուղարության հրապարակած Մարդկանց թրաֆիքինգի մասին 2013 թվականի ամենամյա զեկույցում Հայաստանն ընդգրկվել է առաջին խմբում՝ որպես թրաֆիքինգի դեմ լիարժեք պայքար մղող պետություն:

166. 2012թ. հունիսի 30-ին ՀՀ նախագահի կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը»: Ծրագրի հիմնական նպատակն է ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական համակարգի և դատական իշխանության ապահովումը: Ծրագիրը ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսին են մասնավորապես քրեական, քաղաքացիական, վարչական արդարադատությունը, դատական համակարգը, դատախազությունը, փաստաբանության և քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ոլորտները, որոնցից յուրաքանչյուրում առկա խնդիրների լուծման համար նախատեսված են ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառական բնույթի միջոցառումներ:

167. 2012թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ նախագահը հաստատել է «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը», որի ընդունումը պայմանավորված է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի միասնական և համապարփակ քաղաքականության իրականացման ապահովման անհրաժեշտությամբ: Ռազմավարությունը հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները՝ 1) մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ու զարգացմանն ուղղված պետական հետևողական և համակարգված քաղաքականության հիմնադրույթների սահմանումն ու դրանց կիրառման միջոցով մարդու իրավունքների պաշտպանվածության բարձրացումը, 2) Հայաստանի Հանրապետության իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի հիմնարար քաղաքացիական և քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների իրացման պայմանների բարելավումը՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային և երկկողմ պարտավորություններին համապատասխան, 3) Հայաստանի Հանրապետության իրավասության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության գործուն և արդյունավետ մեխանիզմների ապահովումը, 4) գործող օրենսդրության կատարելագործումը և պատշաճ կիրառման ապահովումը միջազգային չափանիշներին համապատասխան, 5) մարդու իրավունքների և դրանց պաշտպանության եղանակների մասին հանրային իրազեկության բարձրացումը՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, ինչպես նաև լայն հասարակության և քաղաքացիների կողմից սեփական իրավունքների պաշտպանության խրախուսումը, 6) պետական իշխանության մարմինների նկատմամբ հասարակության վստահության ամրապնդումն ու սոցիալական համախմբվածության մեծացումը, 7) մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի, ինչպես նաև իրավապաշտպան

կազմակերպությունների կարողությունների ուժեղացումը, մարդու իրավունքների պաշտպանության ազգային այլ ինստիտուտների հիմնումն ու ամրապնդումը, 8) սոցիալապես խոցելի խմբերի հիմնախնդիրների ու կարիքների հստակեցումը և նրանց իրավունքների ապահովմանն ուղղված արդյունավետ միջոցառումների ձեռնարկումը, 9) քաղաքացիական հասարակության ինստիտուտների ակտիվ ներգրավումը ռազմավարության նպատակներին ուղղված գործողությունների իրականացմանը, 10) հասարակական կազմակերպությունների գործունեության, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ նրանց համագործակցության արդյունավետության բարձրացումը և այլն:

168. Հայաստանի Հանրապետությունը հետևողականորեն իրականացնում է մարդու իրավունքների ոլորտին առնչվող խոշոր միջազգային համաժողովների ժամանակ ընդունված որոշումները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պատրաստում է առաջընթացի վերաբերյալ զեկույցներ: Նշված համաժողովներից կարելի է առանձնացնել Կանանց հարցերով չորրորդ համաշխարհային համաժողովը (Պեկինի պլատֆորմ), Մարդու իրավունքների հարցերով համաշխարհային համաժողովը (Վիեննա, 1993), ՄԱԿ կայուն զարգացման համաժողովը (Ռիո+20), Հազարամյակի սամիթը (Հազարամյակի զարգացման նպատակներ) և այլն:

III. Խտրականության դեմ պայքարի և հավասար իրավունքների ապահովման վերաբերյալ տեղեկատվություն

169. Հայաստանի Հանրապետությունում ստեղծված է համապատասխան օրենսդրական դաշտ օրենքի առջև բոլորի հավասարությունն ապահովելու և Հայաստանում առկա խոցելի խմբերի նկատմամբ խտրականությունը բացառելու նպատակով:

170. ՀՀ Սահմանադրության 14.1 հոդվածն ամրագրում է բոլոր մարդկանց հավասարությունն օրենքի առջև՝ սահմանելով, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

171. Նախորդ կետում ամրագրված սկզբունքները երաշխավորվում են նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և ՀՀ դատական օրենսգրքով: ՀՀ քրեական օրենսգրքի 19–րդ գլխով էլ քրեականացված են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների դեմ ուղղված հանցագործությունները, որի 143–րդ հոդվածը (փոփոխված 2013թ. փետրվարի 5–ին, ՀՕ-3-Ն) սահմանում է, որ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և

քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ :

172. ՀՀ քաղաքացիության մասին օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

173. 2013թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակույթի և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները և կարգավորում է դրանց առնչությամբ ծագող հարաբերությունները:

174. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի կողմից մշակվել է «Խտրականության դեմ» ՀՀ օրենքի նախագիծը, որը ներկայումս գտնվում է հանրային քննարկման փուլում:

175. Հայաստանի Հանրապետությունը վերանկախացումից ի վեր միացել է խտրականության բացառմանն առնչվող գրեթե բոլոր միջազգային պայմանագրերին, որոնք ՀՀ Սահմանադրության, «ՀՀ միջազգային պայմանագրերի մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքների ուժով հանդիսանում են ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասը և ՀՀ օրենքների նկատմամբ ունեն գերակայություն: